ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

V

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հանգիստ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի	3
Հաղորդագրություն Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի առողջության վիճակի մասին	4
Գերագույն Հոգևոր Խորհրդի շրջաբերական հեռագիրը՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի հիվանդության մասին	6
Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի հիվանդության առնչությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի անունով արտասահմանի բեմերից ստացված հեռագրերը	7
Եզրակացություն Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի հիվանդության և մահվան մասին	11
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. երջանկահիշատակ Կաթողիկոսի համառոտ կենսագրությունը	12
Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի դառնակսկիծ մահվան առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի անունով ստացված ցավակցական հեռագրերը	16
ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— Մայր Աթոռը սգի մեջ է	36
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Ազգովին սգում ենք Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետի անդարմանելի կորուստը	38
ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱՊՅԱՆ.— Վերջին ճանդիպում	41
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	44
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Մակարավանք	46
Արժեքավոր նկարների նվիրատվություն Սովետական Հայաստանի Պատկերասրահին	53
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	57
Եղբայրական հարաբերություններ	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՍՍԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԾԱՑՐԱԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

խորին վշտով հայտնում են, որ 1954 թվականի մայիսի 9-ի առավոտյան ժամը 7.40-ին, ծանր հիվանդության հետևանքով, ի Տեր հանգչավ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԾԱՑՐԱԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.

հայրենասեր և մեծագործ Հայրապետը:

Օծումը և թաղումը տեղի կունենան մայիսի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս նկատվել էր Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Վեցերորդի առողջական վիճակի վատացում:

Հրավիրված կոնսիլիումը գտավ.

Ստամոքսի չարորակ ռուռուցք, սրտի և կորոնար (պսակաձև) անոթների ուժեղ արտահայտված սկլերոզ (կարծրացում)՝ արյան շրջանառության խանգարմամբ, թոքերի էմֆիզեմա (թոքաբշտիկների լայնացում) և պնևմոսկլերոզ (թոքային ճյուսվածքի սկլերոզ):

Դիագնոզի որոշման (ախտաճանաչման) պահից սկսած պարբերաբար հրավիրվում են կոնսիլիումներ, մասնակցությամբ ռեսպուբլիկայի խոշորագույն մասնագետներ՝

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆի,

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆի,

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Վ. Հ. ՖԱՆԱՐՋՅԱՆի,

Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆի,

Դոկտ.-պրոֆ. Ս. Ս. ՇԱՐԻՄԱՆՅԱՆի,

Դոկտ.-պրոֆ. Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆի,

Դոցենտ՝ Ա. Ա. ՓԱՓԱՆՅԱՆի:

Միաժամանակ հրավիրված էին խոշորագույն մասնագետներ նաև Մոսկվայից և Խարկովից՝

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, դոկտ.-պրոֆ. Բ. Վ. ՎՈԳՆԻՎ,

Ավագ գիտական աշխատող, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ի. Տ. ՉԵՌՆԻՑԿԻ:

Ապրիլի լույս 23-ին հիվանդի մոտ նկատվել է սրտանոթային սիստեմի գործունեության ուժեղ անկում (կոլապս)՝ լրիվ առիթմիայով (զարկերակի անկանոնությամբ) և արյան ճնշման ուժեղ իջեցմամբ:

Շնորհիվ ձեռք առնված միջոցների, հիվանդը դուրս է բերված կոլապսից, սակայն նրա դրությունը շարունակում էր մնալ ծանր:

Ապրիլի 27-ից մինչև մայիսի 6-ը սրտանոթային սիստեմի գործունեության անբավարարությունը շարունակում է աճել. առաջանում են այտուցներ: Ստամոքսի նշված շարորակ ուռուցքը սնում է հարաճուն արագությամբ:

Հիվանդի ընդհանուր դրությունը վատանում է. շարունակվում է լրիվ առիթմիան, զարկերակի թուլացումը, շնչառությունը արագացած է (30 մեկ րոպեում), արյան ճնշումը ցածր է: Գիտակցությունը պահպանված է:

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստր՝ Ա. Ի. ԽՐԻՄԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության շտաբի վարչության պետ՝ Վ. Ա. ՄՈՒՎՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Ռ. Հ. ՅՈԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Վ. Հ. ՖԱՆԱՐՋՅԱՆ

Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ս. Ս. ԵԱՐԻՄԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

Դոցենտ՝ Ա. Ա. ՔԱՔԱՆՅԱՆ

Պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ՝ Ի. Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

Բոլոր կոնսիլիումներին ներկա են եղել՝

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆը,

Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահող անդամ՝
գերաշնորհ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՅԱՆՅԱՆը,
հոգեշնորհ Տ. ԴԵՈՐԳ ԵՊՍՊԱԳՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՔՅԱՆը:

6 մայիսի 1954 թ.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈԼՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆԵՐԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎՆԵՐԻՆ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի առողջական վիճակը վերջերս վատացավ: Մասնագետ պրոֆեսորների եզրակացությամբ՝ Վենը տառապում է սրտի և սամոսի ծանր հիվանդություններով: Ներկայումս Վենափառը գտնվում է անկողնում, բժիշկների մշտական հսկողության ներքո:

Առաջարկվում է բոլոր եկեղեցիներում կատարել մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի առողջության համար:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ*

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Վեհափառի հիվանդությունը խորապես վշտացրեց մեզ: Աղոթում ենք շուտափույթ ապաքինման համար: Բոլոր եկեղեցիներին ցուցմունք է տրված մաղթանքի համար:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝

ԽԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Խոր ճուզում և վիշտ պատճառեց ամենքիս Վեհի անակնկալ ծանր հիվանդությունը: Սրտագին մաղթանքներ կկատարվին բոլոր եկեղեցիներուն մեջ՝ Նորին Ս. Օծության արագ և կատարյալ ապաքինման համար: Կսպասենք նոր քարի լուրերու անհամբերությամբ:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Վեհափառ Տե՛ր.

Ցավում եմ խորապես Ձեր հիվանդության համար: Աստված շուտափույթ առողջություն պարգևե:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

---

* Գերագույն Հոգևոր խորհուրդը բեմից ստացել է բազմաթիվ ճեռագրեր՝ Վեհի ապաքինման բարեմաղթություններով, որոնցից տալիս ենք միայն արտասահմանի բեմից ստացվածները:—ԽՄԲ.:

ԿԱՀԻՐԵԻՑ

Երեկ, կիրակի օրը, մասնավոր մաղթանքներ են կատարված Եգիպտոսի բոլոր եկեղեցիներում՝ Նորին Սրբության լրիվ ապաքինման համար: Աղոթում ենք Աստուծուն, որ Վեհափառին պարգևե առողջություն և երկար կյանք:

ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՑԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Խորը վշտով կարդացինք Նորին Սրբության լուրջ հիվանդության վերաբերյալ ցեղագիրը: Սրբոց Հակոբյանց Տաճարում ամեն օր կատարվելու է Հայրապետական մաղթանք մինչև Վեհափառի ապաքինումը: Ամբողջ միաբանությունը վշտացած է տխուր լուրից: Խնդրում ենք անընդհատ իրազեկ դարձնել մեզ Վեհափառի առողջության վիճակի մասին:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Խորը վշտով ստացանք ազգիս Վեհափառ սիրելյալ Հայրապետի առողջական վիճակի վատացած լինելու տխուր լուրը: Հրահանգեցինք վիճակիս եկեղեցիներին՝ կատարել Հայրապետական մաղթանք և մասնավոր հսկում: Ջերմեռանդ աղոթող ենք Նորին Սրբության շուտափույթ առողջության և մաղթող, որ Ամենափրկիչը պահպանե երա կյանքը:

ԱՌԱՋՆՈՐԴ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Կիրակի մեր թեմի բոլոր եկեղեցիներում մեջ մասնավոր աղոթք և մաղթանք մատուցինք առ Աստված՝ Նորին Ս. Սծության արագ ապաքինման համար: Մեր սիրելյալ ժողովուրդի ջերմեռանդ աղոթքն է՝ որ բարին Աստված փրկե Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքը և պարգևե Իրեն կատարյալ առողջություն:

Հայրապետական պատվիրակ՝ Հարավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻՑ

Կիրակի մեր եկեղեցիներուն մեջ աղոթեցինք և միշտ կաղոթենք մեր Վեհափառ Կաթողիկոսի առողջության համար:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումինահայ ժողովուրդն ու մենք ջերմեռանդ աղոթում ենք առ Աստված մեր սիրելյալ մեծ Հայրապետի շուտափույթ և կատարյալ առողջության համար՝ հուսախություն բոլորիս և ի պայծառություն մեր միասնական եկեղեցու:

Առաջնորդ Ռումինահայ թեմի՝
ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ,
ԴՈԿՏՈՐ ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Շանթահարիչ հեռագրեն խուրապես զգացված, այս առավոտ, ի ժամ պատարագի, ելուրաբար Հաղարս գտնվող Գրիգոր Լուսավորչի Կաթողիկոսարանի նախագահությամբ կատարվեցավ մաղթանք և աղոթք՝ Վեհափառ Հայրապետի բժշկության և կատարյալ ապաքինման համար: Կսպասենք նոր լուրի:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Վեհափառի առողջության վատանալը մեծ վիշտ պատճառեց: Հրաճանգեցինք մեր բոլոր եկեղեցիներուն կատարել մաղթանք Վեհի առողջության համար: Կմիացնենք ժողովուրդի մաղթանքին մեր անձնական աղոթքները: Տերը շուտափույթ առողջություն պարգևե մեր սիրելի Հայրապետին:

Առաջնորդ Կալիֆորնիոյ թեմի՝
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼՍՏՅԱՆ

ԹԱՎՐԻԶԻՑ

Մայիսի 9-ին, Թավրիզի մայր եկեղեցում, նոր բազմության ներկայությամբ, կատարեցինք զոհաբանական աղոթք՝ վասն արեշատության Վեհի: Խնդրում ենք հայտնել Վեհի առողջության վիճակը:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԴ ՔԱՀԱՆԱ

ԹԵՀԵՐԱՆԻՑ

Վեհափառ Հայրապետի առողջության համար Թեհրանի մայր եկեղեցում. բազմաձազար աղոթողների մասնակցությամբ կատարվեց մաղթանք: Ժողովուրդը և հոգևորականությունը ամենակալից սիրով ճայցեցին Վեհափառ Կաթողիկոսի կատարյալ ապաքինումը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ԲՈՄԲԵՅԻՑ

Սրտանց միանում եմ Ձեզ հետ Նորին Սրբության շուտափույթ ապաքինման աղոթքներին: Ցանկանում ենք Նրան երկար կյանք:

ԺՈՋԵՖ ՂԱԲԻԲՅԱՆ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Վեցերորդի առողջական վիճակն սկսեց վատանալ, որի պատճառով հիվանդը գտնվում էր մասնագետ պրոֆեսորների հսկողության տակ:

Ընդլայնված կոնսիլիումը նրա մոտ գտավ ստամոքսի չարորակ ուռուցքի առկայություն՝ որովայնի խոռոչի հարևան օրգանների մետաստազներով (սերմացրվածություն), կարոիռարտերիոսկլերոզ (սրտի և անոթների սկլերոզ)՝ լրիվ առիթմիայի երևույթներով և սրտի գործունեության կոնպենսացիայի (ճավասարակշռության) խանգարմամբ, թոքերի էմֆիզեմա (լայնացում) և պնևմոսկլերոզ (թոքերի սկլերոզ): Դրությունը հարաճուն կերպով վատանում էր, երբեմն առաջանում էր սրտանոթային սիստեմի գործունեության խիստ անկում (կոլապս):

Չնայած ձեռք առնված բոլոր անհրաժեշտ միջոցառումների, մայիսի 9-ին, ժամը 7-ն անց 40 րոպեին հիվանդը վախճանվեց:

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստր՝ Ա. Ի. ԵՐԻՄԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության շտաբի վարչության պետ՝ Վ. Ա. ՄՌԱՎՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դոկտ.-պրոֆ.՝ Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Ռ. Հ. ՅՈԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Վ. Հ. ՏԱՆԱՐՋՅԱՆ

Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ս. Ս. ՇԱՐԻՄԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

Դոցենտ՝ Ա. Ա. ՋԱԹԱՆՅԱՆ

Պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ՝ Ի. Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

Ներկա էին՝

Էջմիածնի միաբանությունից, Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահող անդամ՝ գերաշնորհ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ,

Հոգեշնորհ Տ. ԳԵՈՐԳ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ,

Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ՝ Տ. Ս. Ի. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ և Տ. Մ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ:

9 մայիսի 1964 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Դեորգ Զ. Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմության ամենակարկառուն և բացառիկ ազգային-եկեղեցական դեմքերից մեկն է, որի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված են մեր ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունների հետ:

Ավելի քան վաթսուն երկար տարիների վրա տարածվող նրա գործունեությունը առանձնապես ուսանելի է և նշանակալից նրանով, որ նա Ս. Էջմիածնի Դեորգյան Հոգևոր Ճեմարանի գրասեղաններից մինչև Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական բարձրագույն գագաթը բարձրացել է շնորհիվ իր անընկճելի հավատին, իր անձնական և բարոյական այն հազվագյուտ ձիրքերին և շնորհներին, որոնց խոր արմատը գտնվում է նրան ծնունդ տվող հայ ժողովրդի հոգեկան երակներում:

Նորին Ս. Օծությունը, սարկավագության օրերից մինչև Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռ բարձրանալը, իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, նվիրաբերել է հայ ժողովրդին, Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն:

Հանգուցյալ Հայրապետը ծնվել է 1868 թվականի դեկտեմբերի 2-ին, Ռոստով-Դոնի Նոր-Նախիջևան քաղաքում, փականագործ արհեստավորի համեստ, բայց ազգային-եկեղեցական ավանդություններով հարուստ և բարեպաշտ ընտանիքում:

Մանուկ Գեորգի նախադպրոցական դաստիարակության գործում վճռական դեր է կատարել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ոգով և ազգային դաստիարակությամբ սնված ու մեծացած նրա շնորհալի և բարեպաշտ մայրը՝ Կատարինեն, որ մանուկ Գեորգին իր մայրական անխարդախ կաթի հետ, տվել է նաև եկեղեցասիրության և ազգասիրության շունչն ու ոգին:

Մորից բացի, մանուկ Գեորգը մեծ ուշադրությամբ ունկնդրել է իր Աբրահամ պապի ազգային-եկեղեցական կյանքից առնված զրույցներն ու ժողովրդական «քառ ու բանով համեմված ժողովրդական հեքիաթներն ու առակները:

Մանուկ Գեորգը իր առաջին նախակրթական դաստիարակությունը ստանում է Նոր-Նախիջևանի ծխական դպրոցում, 6 տարեկան հասակում: Դպրոցը իր հերթին ամրապնդում և խորացնում է մանուկ Գեորգի ընտանեկան դաստիարակության բարի սերմերը:

9 տարեկան հասակում, պատանի Գեորգը ընդունվում է Նոր-Նախիջևանի հոգևոր սեմինարիայի առաջին դասարանը: Նա վաղ տարիքից իր մեջ զգում է Ազգին և Եկեղեցուն ծառայելու անհանգիստ կոչում:

Այդ տարիներին Նոր-Նախիջևանի հայ գաղութը Ս. Էջմիածնի Դեորգյան Ճեմարանում մշտապես պահում էր 5 բոշակառու ուսանող. և ահա 1879 թվականին պատանի Գեորգը ընդունվում է Ճեմարան: Ուսումնա-

տեղ պատանու առաջ բացվում են գիտության, զարգացման դռները: Ճեմարանում նա կոփվում ու դաստիարակվում է քրիստոնեական շնչով և հայեցի դաստիարակությամբ:

1889 թվականին նա ավարտում է Ճեմարանի լրիվ դասընթացը: Նա արդեն բազմակողմանիորեն պատրաստված մի խոստումնալից երիտասարդ էր, որի վրա մեծ հույսեր էին կապում վանական իշխանությունն ու Ճեմարանի տեսչությունը: Ճեմարանում կուսակրոնությունն ընդունող առաջին սաներից մեկն է լինում նա, Դարեգին Հովսեփյանցի և Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանի հետ, 1889 թվականին:

Վանական իշխանության կարգադրությամբ և յուսահոգի Ս. Մակար կաթողիկոսի արտոնությամբ երիտասարդ և խոստումնալից, բարեշնորհ Գեորգ սարկավագը, Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանի հետ մեկնում է Լայպցիգ՝ հետևելու աստվածաբանական և փիլիսոփայական դասընթացների: Ապա մեկ տարի նախապատրաստվելուց հետո նա ընդունվում է նաև Լայպցիգի կոնսերվատորիան: Նա Ճեմարանում իսկ ցուցաբերել էր երաժշտական բացառիկ ընդունակություն:

Փայլուն հաջողություններով համալսարանական դասընթացը ավարտելուց հետո, 1894 թվականին Գեորգ սարկավագը, զինված գիտությամբ և մեծ եռանդով, վերադառնում է Մայր Աթոռ՝ իր երիտասարդական ուժերը նվիրելու հայ դպրոցի զարգացման և Մայր Աթոռում նոր սերնդի հոգևոր դաստիարակության գործին: Այնուհետև նրա առջև բացվում է ուսուցչական դժվարին, բայց պատվավոր և շնորհընկալ ասպարեզը:

1895—1913 թվականներին, նա իր ծննդավայրում անխոնջ ու անդուլ, մեծ արդյունավետությամբ աշխատում է կրթական-դաստիարակչական ասպարիզում: Սիրվում է բոլորից, մանավանդ իր աշակերտներից, որոնք փաղաքշանքով նրան անվանում էին «հայր սարկավագ»:

1913 թվականին, յուսահոգի Տ. Գեորգ Ե. կաթողիկոսը նրան վարդապետ է ձեռնադրում և նշանակում Նոր-Նախիջևանի առաջնորդական փոխանորդ: Երիտասարդ և գիտնական Գեորգ վարդապետը իր նոր պաշտոնում մեծապես օգտակար է հանդիսանում իր բեմին: Նա իրեն հատուկ բծախնդրությամբ և կոչովով ծառայում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն և իր հոտին: Նա իր բեմի իսկական հովիվն է հանդիսանում, խոսում է, խրատում, մխիթարում, բնդլայնում է դպրոցական ցանցը, զարկ է տալիս ազգային-եկեղեցական կյանքին, մաքալերում և գլխավորում է գաղութի ողջ ազգային-մշակութային հասարակական կյանքը, զարկ է տալիս մայրենի լեզվի դասավանդմանը և ազգային ոգու զորացմանը: Նրա օրով Նոր-Նախիջևանի հայ գաղութը ապրում է ազգի սիրով և եկեղեցու գաղափարով:

1914 թվականին, Համաշխարհային առաջին պատերազմը նոր և անլուր աղետներ էր բերում և՛ հայ ժողովրդին և՛ Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն: Ֆիզիկական բնաջնջման վտանգը Դամոկլյան սրի նման կախված է ողջ հայության վրա: Թյուրքահայաստանից մահից մազապուրծ հայ գաղթականությունը հոսում է Ս. Էջմիածին: 1915 թվականին կազմակերպվում է Ս. Էջմիածնում եղբայրական օգնության կոմիտեն: 1916 թվականին Գեորգ վարդապետը իր տնավեր ժողովրդի մեջն է, խոսում է, խրատում, խրախուսում, և աշխատում է բուժել հայ ժողովրդի մեծ վիշտն ու ցավը. Նա Սինոդի անդամ է նշանակվում և Երևանի եղբայրական օգնության կոմիտեի նախագահ:

Գաղթականների տեղավորման և պարենավորման գործում Գեորգ վարդապետը երևան է բերում կազմակերպչական մեծ ընդունակություններ: Նա անդուլ աշխատում է, գիշեր ու ցերեկ:

Գեորգ Ե. կաթողիկոսը, գնահատելով նրա հայրենանվեր գործունեությունը, 1917 թվականին նրան եպիսկոպոս է ձեռնադրում, իսկ միաբանությունը նրան ընտրում է վանական կառավարության նախագահ և Մայր Տաճարի լուսարարապետ: Գեորգ եպիսկոպոսը, սակայն, գրիչների վրա հանգստացողը չէր: Նա իր ողջ եռանդն ու գործունեությունը ի սպաս է դնում իր ժողովրդի ցավերի բուժ-

ման, և սրբությամբ ծառայում է իր եկեղեցուն և ժողովրդին: 1922 թվականին ընտրվում է Թիֆլիսի թեմի թեմական առաջնորդ, ուր տարածում է քարոզչական բեղուն գործունեություն: 1927 թվականին համազգային-եկեղեցական ժողովում ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

Այդ օրերին Թիֆլիսում և Հյուսիսային Կովկասում սկսվել էր «Ազատ եկեղեցականներ»ների շարժումը: Կաթողիկոսի կարգադրությամբ Գեորգ եպիսկոպոսը գործուղվում է Թիֆլիս, և իր իմացական շրջահայեցողությամբ, իր դիրքով և հեղինակությամբ նա մաքրում է Թիֆլիսի հայ եկեղեցին «Ազատ եկեղեցական» շարժումից, և բոլոր եկեղեցիները նորից կապում Մայր Աթոռին, և վերացնում է հայ հավատացյալ համայնքներում տեղ գտած օտարոտի և ճիվանդագին երևույթները:

1932—1938 թվականներին նա անդամ է Գերագույն Հոգևոր Խորհրդին:

1938 թվականին, Խորեն կաթողիկոսը, իր մահվան անկողնում, Գեորգ եպիսկոպոսին նշանակում է Ամենայն Հայոց Հայրապետական Տեղակալ:

Խորեն կաթողիկոսի մահից հետո Տեղակալ Ցորեֆյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի մյուս անդամների հետ, ձեռնհասորեն վարում է Ամենայն Հայոց Հայրապետության գործերը, իրեն հատուկ կանոնավորությամբ, հետևողականությամբ և վճռականությամբ:

1941 թվականին ազգային-եկեղեցական ժողովը նրան հաստատում է Տեղակալի պաշտոնում: Նրա համար սկսվում է ավելի պատասխանատու և դժվարին գործունեության մի շրջան: Բայց նա դժվարություններից ձեռնթափ եղողը չէր: Տեղակալ Սրբազանը իմաստությամբ ղեկավարում է տեղական և արտասահմանյան հայ թեմերը, և ողջ հայությանը հավաքում Մայր Աթոռի և Հայրենիքի շուրջը: Նրա Տեղակալության օրով, Մայր Աթոռի անմիջական ղեկավարությունը հայ ազգային-եկեղեցական կյանքում ավելի զգալի և շոշափելի է դառնում թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում: Ս. Էջմիածնից ուղարկված հատուկ նվիրակներ, Տեղակալի հրահանգներով և ցուցումներով, աշխատում են սերտացնել Մայր Աթոռի և թեմերի փոխհարաբերությունները:

Սրբազանի տեղակալության օրով, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իր պարտքը սրբությամբ և պատվով է կատարում Հայրենական մեծ պատերազմի դժնդակ տարիներին: Տեղակալ Սրբազանը իր կոչերով, կոնդակներով, ինչպես Մայր Հայրենիքում, նույնպես և Սփյուռքում կազմակերպում է Հայրենիքի պաշտպանության կոմիտեներ, և կոչ է անում նախնյաց ոգով և քաջությամբ կռվել մեր Հայրենիքի թշնամիների դեմ: Ողջ հայությունը սրտագին արձագանքում է իր սիրելի և հայրենասեր մեծ Տեղակալի հայրենասիրական կոչերին:

1944 թվականին սկսվեց հրատարակվել Մայր Աթոռի նոր պաշտոնական ամսագիր «Էջմիածին»ը:

1945 թվականի ապրիլի 19-ին, Գեներալիսիմուս Ստալինը ընդունեց Տեղակալ Ցորեֆյանին և նրան ընձեռեց լայն հնարավորություններ՝ Ս. Էջմիածնի վերականգնման աշխատանքների համար:

1945 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռում գումարվեց ազգային-եկեղեցական մեծ ժողով, որը նույն ամսի 22-ին միաձայնությամբ նրան ընտրեց Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ: Ամսի 24-ին տեղի ունեցավ նորընտիր Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի օծումն ու գահակալությունը:

Գեորգ Զ.ի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա նոր և խոստումնալից մի էջ բացեց հայ նորագույն ազգային-եկեղեցական կյանքում:

Նորընտիր Հայրապետը, երիտասարդի խանդավառությամբ, ձեռնամուխ եղավ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության առաջ կանգնած կարևոր և անհետաձգելի խնդիրների լուծմանը:

Նրա հայրապետական առաջին կոնդակը փաստորեն նախագիծ-ծրագիր էր մեծանուն Հայրապետի ապագա գործունեության համար:

Նորընտիր Հայրապետի բարձր ուշադրությունը առաջին հերթին գրավում էին Մայր Տաճարի վերականգնման աշխատանքները,

Մայր Աթոռի և թեմերի փոխհարաբերության հարցերը, Սփյուռքի և Մայր Հայրենիքի կապը:

Եվ նա գործի ձեռնամուխ եղավ մտածված, չափված, իմաստուն վարչագիտությամբ:

Վեհը իր Հայրապետության առաջին տարիներին զբաղվեց նաև Հայկական հարցով: Նա իր ժողովրդի անունից միջազգային արդարադատության առաջ արծարծեց հայկական բռնագրավված հողերի վերադարձման հարցը իր սեփական տիրոջ:

1946 թվականին նա ականատես եղավ իր ժողովրդի մեծ հայրենադարձին, երբ Սփյուռքի իր հոտի մի մասը վերջնականապես գտավ իր ազատագրումը:

Վեհափառն առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ հոգևորական նոր սերնդի պատրաստման գործին: Նա իր սեփական աչքով տեսավ իր քրտնաջան աշխատանքի բարի պտուղները: Այսօր Վեհափառի շնչով հասակ առած հոգևորականների մի սերունդ կա Մայր Աթոռում:

Վեհափառի Հայրապետության տարիների ամենագեղեցիկ արդյունքներից մեկը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության գեղեցիկ գաղափարների իրագործումը հանդիսացավ: Նա ինքը անձամբ հանդիսացավ հայ ազգային-եկեղեցական միասնության ոսկեղեն կապը Մայր Հայրենիքի և Սփյուռքի, Մայր Աթոռի և թեմերի միջև:

Վեհափառը վաղուց արդեն մշակել և կազմել է հայ ազգային-եկեղեցական Սահմանադրությունը, որը ազգային-եկեղեցական ժողովի հավանությունից և Վեհափառի հաստատումից հետո պիտի գործադրության դրվեր:

Երկրորդ կարևոր և հոյակապ աշխատությունը, որը նույնպես ավարտվել է, հայ եկեղեցական բարեկարգության ծրագիրն է, որը Վեհափառը կազմել է ձեռնհասորեն:

1954 թվականի սեպտեմբերի 26-ը Վեհափառի ցանկությամբ կոչված էր լինելու նրա գահակալության անմոռանալի և պատմական օրերից մեկը: Այդ օրը Ս. Էջմիածնում Վեհափառը Սրբալույս Մեռոն էր օրհնելու...

Անակնկալ մահը կիսատ թողեց նրա ցանկության կատարումը:

Ոչ ևս է մեծագործ և հայրենասեր Մեծ Հայրապետը: Հայ երախտագետ ժողովուրդը սրբությամբ կպահի իր հոգում՝ իր մեծ զավակի և մեծանուն Հայրապետի անունն ու հիշատակը:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՌՆԱԿՍԿԻԾ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ԹԵՄԵՐԻՑ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Խորապես վշտացած ենք վեհափառ Գեորգ Զ.ի մահվան առթիվ։ Ընդունեցեք մեր միաբանության և ժողովուրդի խորին ցավակցությունները։ Անմիջապես հեռագրեցեք բաղման թվականը։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝

ԽԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՋԱՊԱՀՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՑԻՑ

Հանուն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և Հորդանանի հավատացյալ ժողովուրդին, կնայտնենք մեր խոր և անդարմանելի սուգը՝ եկեղեցիին և Ազգին այս անփոխարինելի կորուստին համար։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Բոլորս սրտի ամենախոր կսկիծով և վշտակցությամբ ճանգիստ կմաղթենք մեր ամենասիրելի, մեծ և անփոխարինելի Հայրապետի հոգվույն և անսասանություն՝ Մայր Աթոռին։ Կկատարվին պատշաճ արարողություններ պատրիարքական և բոլոր եկեղեցիներուն մեջ։

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՀԻՐԷԻՑ

Նորին Սրբություն մահվան լուրը խորապես վշտացրեց Եգիպտոսի Իր հոգևոր գավակներին: Ողբում ենք այն կորստի համար, որին ենթարկվեց մեր եկեղեցին: Մեր խորը ցավակցություններն ենք հայտնում և աղոթում ենք Աստուծուն՝ մեր եկեղեցու պայծառության և Ս. Աթոռի անսասանության համար:

ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՑԱՆ

ԲԱՔՎԻՑ

Հիվանդանոցում ինձ հաղորդեցին Վեհափառ Հայրապետի անակնկալ մահվան մասին: Խնդրեցի մայիսի 15-ին դուրս գրել ինձ հիվանդանոցից: Ընդունեցեք իմ խոր վիշտն ու ցավակցությունը:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻՑ

Իմ խորին վիշտը կհայտնեմ Վեհափառ Հայրապետի վախճանման առթիվ: Կմաղթեմ արժանավոր հաջորդի ընտրությունը:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Անհուն կսկիծով կարդացինք բոթաբեր հեռագիրը, որով կհաղորդեք՝ թե Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ի Տեր հանգյավ: Մեծ է սուգը բովանդակ հայ ժողովուրդին և Հայաստանյայց եկեղեցվո, որ վաղաժամ կկորսնցնե իր աստվածարյալ մեծագործ Հովվապետը: Հարավային Ամերիկայի մեր վիճակի երեք թեմերու կեդրոնական վարչությանց, եկեղեցական դասի և համայն հայ ժողովուրդի անունով կհայտնենք մեր սրտամորմոք ցավակցությունը Մայր Աթոռ սգակիր միաբանության: Կաղոթենք, որ բարյաց Տերը ի լույս երեսաց յուրոց հանգուցանե երանաշնորհ Հայրապետի հոգին, դասավորելով զնա ընդ սրբազան հայրապետսն եկեղեցվո, և փութով արժանավոր հաջորդ մը բազմեցնե Լուսավորչի Ս. Աթոռին վրա:

Վշտակից՝

Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՒԵԱՐԵՍՏԻՑ

Վշտաբեկ սրտով ողբում ենք հայրենասեր Մեծ Հովվապետի մահը: Ներկայացնում ենք Ռումինահայ թեմի և մեր ամենախոր ցավակցությունը: Հարգանքով խոնարհվում ենք Վեհաշնորհ Հայրապետի դագաղի առաջ: Թող Տերն անփոթ և անսասան պահե մեր միասնական Ս. եկեղեցին և աստվածակոչյց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Առաջնորդ Ռումինահայ թեմի՝
ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ,
ԴՈԿՏ. ԳՐԻԳՈՐ ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Իմ անարտահայտելի ցավակցություններս եմ հայտնում Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ: Աստված մշտական հոգին լուսավորե և մեր եկեղեցուն հավիտյան պահպանե:

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Մեր հոգևորականությունը, եկեղեցական խորհուրդները, ողջ հավատացյալները և անձամբ մեզ խոր ցավակցություն ենք հայտնում նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ողբում ենք ականավոր Հովվապետի կորուստը:

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՔՎԻՑ

Ստացանք բոքարեր հեռագիրը: Անհուն է մեր վիշտը: Թեմական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ ես ողբում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի անժամանակ մահվան առթիվ: Հայ եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը որբացան: Մեր խոր ցավակցությունն ենք հայտնում Գերագույն Հոգևոր խորհրդին: Հուղարկավորության համար կուղարկվի հատուկ հանձնաժողով:

Թեմական առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՓԱՐԻԶԻՑ

Խորապես վշտացած ենք Հայոց եկեղեցու անդարմանելի և աչքառու կորստի առթիվ: Նորին ցավակցություն ենք հայտնում նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐԳԻՍ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Սրտի անհուն կսկիծով տեղեկացանք Վեհափառի վախճանումը: Եկեղեցին կորսնցուց իր իմաստուն Հայրը, իսկ ազգը՝ մեծ գավակը: Երջանկահիշատակ Կաթողիկոսը կերթա պատմության՝ իբրև մեր եկեղեցվո մեծագույն դեմքերեն մեկը: Աստված իր հոգին երանելի հայրապետներու դասին արժանացնե, անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, անձեղիր նոր Գահակալ պարգևե մեզ և անշարժ պահե Հայոց եկեղեցին:

Ի դիմաց թեմիս հոգևորականության, երեսփոխանական ժողովս, կեդրոնական վարչության, հոգևոր խորհուրդներուն և համայն ժողովուրդի անունով կխոնարհինք հանգուցյալ Վեհափառի հիշատակին առաջ և կմիացնենք մեր վիշտը Ձեր և ընդհանուրի սուգին:

Առաջնորդ Կալիֆորնիոյ թեմի՝
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼՍՏՅԱՆ

ՄԻԼԱՆՈՅԻՑ

ԿողքաՀՐ սիրելի Կաթողիկոսի վշտալի մահը: Կարգադրված է հոգեհանգիստ կատարել: Ասված պահե էջմիածինը և Հայոց եկեղեցին:

Խորին ցավակցությամբ՝

ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Սրտի խորին կսկիծով լսեցինՀ Հայոց եկեղեցու իմաստուն Հայրապետի՝ Ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Սրբազնագույն Կաթողիկոսի մահվան գույժը: Հայտնելով Գերագույն Հոգևոր խորհրդին և Ձեր միջոցով համայն հայության մեր ցավակցությունը, մաղթում ենՀ, որպեսզի երկինքը պարգևե որբացած Հայ եկեղեցուն ավետարանի ոգով առաջնորդվող և խաղաղության գործին և Հայրենիքին ամբողջ սրտով ծառայող նման մի արժանավոր Հովվապետի, որը կարողանա փարատել մեր սրտի այս ծանր վիշտը:

Ս. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԾԽԱԿԱՆՆԵՐ

ԹՐԻԼԻՍԻՑ

Վրաստանի թեմական խորհուրդս, հավատացյալների հետ միասին, ողբում ենՀ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Ծայրագույն ՊատրիարՀ-Կաթողիկոսի մահը և խոր ցավակցություն ենՀ հայտնում Գերագույն Հոգևոր խորհրդին:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Նորին Վեհափառություն Տ. Տ. Գեորգ Զ.ի մահվան տխուր լուրը մեզ խոր վիշտ պատճառեց: Ազգընտիր Հայրապետը փակեց իր լուսաշող աչքերը: Մեր սրտերը դառնորեն ողբում են նրա մահը: Հայ եկեղեցին զեռևս կարիքն ուներ նրա իմաստուն ղեկավարության: Հոգելույս Հայրապետի տարած աշխատանքը միջազգային խաղաղության գործին՝ անմոռանալի կմնա: Հայ ժողովուրդը կորցնում է իր ամենաարժանավոր Հայրապետը հանձին Գեորգ Զ.ի:

Ս. Սարգիս եկեղեցին, հավատացյալները, հոգաբարձությունը և քահանայից դասը՝ ցավակցություն են հայտնում Գերագույն Հոգևոր խորհրդին:

Ս. Սարգիս եկեղեցու ավագ քահանա՝
Տ. ՀՈՎՍԵՓ ՔՈՍՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻՑ

Խոր վշտով տեղեկացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ. Տ. Գեորգ Զ.ի մահը: Բուլղարահայ հավատացյալները կողքաՀ եկեղեցաշեն, հայրենասեր և խաղաղության մարտիկ Մեծ Հայրապետի անփոխարինելի կորուստը:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԹԵՆՔԻՑ

Խորին վշտով կողբանք մեր սիրեցյալ Վեհափառ Հայրապետին դառն և ծանր կորուստը և հանուն սգակիր հուճահայ գաղութին՝ կեցյանեանք ցավակցություններ ի խորոց սրտի:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՑԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Անհուն կսկիծով ողբում ենք վշտալի մահը Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի: Մինչև բազմաթ օրը ամենօրյա «Ամբիծ»ը կատարվում է:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԳՈՐԾԱԿԱՎԱԿԱՆ ԺՈՂՈՎ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ԹԱՎՐԻԶԻՑ

Առրպատականի հայոց թեմական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն ժողովուրդը ողբում են Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետի մահը: Աղոթում ենք, որ Բարձրյալը ընդունե հանգուցյալի հոգին ի դասս սրբոց յուրոց և տնեսպաղ վերացնե սգո քողը Հայրապետական Աթոռից: Կարգադրեցինք նաև, որ դպրոցները փակեն և թեմի բոլոր եկեղեցիներում այսօրվանից մինչև կիրակի, ամեն օր, կատարվի «Ամբիծ», իսկ կիրակի օրը հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալ Հայրապետին:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՍՊԱՀԱՆԻՑ

Խորունկ վշտակցություններ թեմիս հայ ժողովրդի և հոգևորականության կողմից՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ: Թող տերը լուսավորի Սրբազնասուրբ Հայրապետի հոգին և պարգևի Հայրապետական Գահին արժանավոր հաջորդ:

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՒԽՈՒՄԻՑ

Սրտի անհուն կսկիծով ողբում ենք Հայ Եկեղեցու Հովվապետ, երջանկահիշատակ և սիրելի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը:

ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՄԱՅՆՔ
ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի հոգևորականությունը և բոլոր հավատացյալները խոր ցավակցություն են հայտնում մեր սիրելի Վեհափառ Հայրապետի՝ Գեորգ Ց.ի մահվան առթիվ:

Հավատացյալների և հոգևորականության անունից՝
ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՕՐՋՈՆԻԿԻՋԵԻՑ

Եկեղեցական խորհուրդը և անձամբ ես խորապես ցնցված ենք Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվամբ: Մեր անկեղծ վիշտն ու ցավակցությունն ենք հայտնում անփոխարինելի կորստյան առթիվ:

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԵԿՅԱՆ

ՄԱՆՉԵՍՏՐԻՑ

Հենց նոր լսեցինք խորին ցավակցությամբ մեր սիրելի Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը և Մանչեստրի հայ համայնքի կողմից հայտնում ենք անկեղծ ցավակցություններ:

ՏԵՐ ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Վեհափառի թանկագին կյանքի ավարտման լուրը լսելով, ճնշկահայությունը ստացին զգացվել է: Հայության այս անփոխարինելի կորստի համար մատուցում ենք ամենն ցավակցություններ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻՑ

Ողբում ենք Վեհափառ Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Նորին Սրբություն Գեորգ Զ.ի կորստի առթիվ: Հայտնում ենք ցավակցություններ:

Վշտացած՝
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿԻՑ

Բուդյոնովսկի հայ կրոնական հավատացյալ համայնքը իր խոր ցավակցությունն է հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Եկեղեցական խորհրդի նախագահ՝
ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔԱՀԱՆԱ ՔՈՎԽԱՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խորապես վշտացած ենք Գեորգ Կաթողիկոսի մահվան առթիվ: Աղոթում ենք Մայր Աթոռի անսասանության համար:

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԱՍՅԱՆ

ՏԵԼ-ԱՎԻՎԻՑ

Իսրայելի հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչները, ամբողջ հայոց համայնքը ի միասին, խորապես վշտացած, ողբում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ, որի սուրբ հիշատակը մշտական հավերժացնելու ենք մեր սրտերում: Հայտնում ենք մեր խորին ցավակցությունները, աղոթում ենք Աստուծուն, թող Տերը հոգին լուսավորե և մեր Հայոց եկեղեցին անսասան պահպանե:

Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝
ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՊԱՏՅԱՆ

ԿԻՐՈՎԱԲԱԴԻՑ

Անհուն վշտի զգացմունքով իմ խոր ցավակցությունն եմ հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՄԻԼԱՆՈՅԻՑ

Ողբում ենք Հայրապետի կորստի համար: Խոնարհվում ենք Նրա դագաղի առաջ:

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻՑ

Արմավիրի հայ հավատացյալ համայնքը Ձեզ հետ միասին խորապես ողբում է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը և իր անկեղծ ցավակցությունն է հայտնում Գերագույն Հոգևոր խորհրդին և միաբանությանը: Վեհափառ Հայրապետի մահը անփոխարինելի կորուստ է ամբողջ Հայ եկեղեցու համար:

ԱՆԱՆՑԱՆ ՔԱՀԱՆԱ

ՄԱՐՍԵԼԻՑ

Կողքանք: Խորին ցավակցություններ Վեհափառ Հայրապետի մահվան առթիվ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐՈՎԱԲԱԴԻՑ

Կիրովաբադի հայ հավատացյալ համայնքը և եկեղեցական խորհուրդը խորապես ողբում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՄԲԵՅԻՑ

Բոմբեյի հայոց համայնքը խորապես վշտացած է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՂԱԶՎԻՆԻՑ

Ղազվինի հայ համայնքը, եկեղեցական վարչությունը և հոգևոր հովիվը հայտնում են իրենց վշտագին ցավակցությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի ցավալի մահվան առթիվ: Հավիտենական հանգիստ ձերունազարդ Հայրապետին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԶԱԼԴՐԻՑ

Մենք, եկեղեցական խորհուրդը և հավատացյալները խոր ցավակցություն ենք հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առիթով: Ողբում ենք մեր անփոխարինելի Հայրապետի մահը:

Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՈՐԴՈԲԱՅԻՑ

Կորդոբանայ գաղութը դառնապես ողբում է սիրելյալ և պատվական Հայրապետի մահը: Հայցում ենք Աստուծո օգնությունը Հայաստանյայց Եկեղեցվո և Մայր Աթոռի վրա:

ԿՈՐԴՈԲԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

ԿՐԱՍՆՈԴԱՐԻՑ

Խոր կսկիծով լսեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան բոթը: Խնդրում ենք ընդունել մեր անկեղծ ցավակցությունը: «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Տ. ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ.
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ընդունեցեք մեր խորին վիշտն ու ցավակցությունները ամբողջ Ազգի, մեր Եկեղեցու և Ձեր միաբանության կրած կորստի՝ Նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ:

Ս. Սարգիս եկեղեցու համայնքի անունից՝
ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Լոնդոնի հայոց համայնական խորհուրդը հանուն գաղութիս իր խորին վշտակցությունը կհայտնե Հայաստանյայց Եկեղեցիին, Հայ Ազգին և միաբանությանդ կրած մեծ կորուստին՝ մեր սիրելյալ Վեհափառի վախճանման առթիվ:

Համայնական խորհրդի ատենապետ՝
ՔՅՈՒՐՔՃՅԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Անհուն է Աստրախանի հայ հավատացյալների վիշտը Մեծ Հայրապետ և իսկական Հայրենասեր, աշխարհում խաղաղության համար մարտնչող, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Հայտնում ենք խոր ցավակցություն մեր հոգևոր Հոր մահվան առթիվ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՔԱՀԱՆԱ.
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՑ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Կրոնական պատգամավորների խորհուրդը իր ցավակցությունն է հայտնում Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Հայ Եկեղեցու Գերագույն Պետի՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՊՈԼՅԱՆՍԿԻ

ԵՐԵՎԱՆԻՑ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը իր խոր ցավակցությունն է հայտնում Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ խաղաղության գործի ջերմեռանդ պաշտպան, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Պետ, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՀՐԱՉԵԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն իր խոր ցավակցությունն է հայտնում Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի անդամ, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Բարի կամքի միլիոնավոր մարդիկ ողբում են ամբողջ աշխարհում խաղաղության անհնարին պաշտպանի մահը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻՑ

Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեն խորը ցավակցություն է հայտնում Խաղաղության ջերմ պաշտպան, Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի անդամ, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻՑ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան լուրը Ամերիկահայ ազգային խորհուրդը և ամբողջ ամերիկահայ զաղութը խոր սուգի մատնեց: Հայ ժողովուրդի միասնականության մեծ ռահվիրան, ճշմարիտ, կորովի և հեռատես Հովվապետը իր մահով բաց մը թողուց ազգային և եկեղեցական կյանքի մեջ, որ դժվարավ պիտի լեցվի: Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին Իր անձնվեր ու բանկագին ծառայություններով, Ան հաջողեցավ ընդհանուր հայությունը ոգևորել և պայքարի մղել հիտլերյան աշխարհակալական հորդաներու դեմ, Հայրենիքի հանդեպ Իր ուղիղ, անշահախնդիր դիրքով, հայ դատին ի նպաստ տարած անվեհեր աշխատանքով և համայն աշխարհի խաղաղության համար տարած նվիրական ջանքերով՝ Ան սիրելի դարձավ հայ ժողովուրդին ամենուրեք:

Հավերժ փա՜ռք մեր սիրելի Հայրապետի հիշատակին:

Ի ԴԻՄԱՑ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ՝

Ատենապետ՝ ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ,
Քարտուղար՝ ԱՐՇԱՎԻՐ ՇԱՄԼՅԱՆ,
Ճեօրեճ՝ ԵՂՆԻԿ ԱԶՆԱԿՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամերիկահայ հատաջդիմական միության կեդրոնական վարչությունը, բարգման հանդիսանալով իր անդամներուն ու համակիրներուն զգացումներուն, խորին վիշտ կնայտնե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի Գերազույն Հովվապետ Վեհափառ Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանման առթիվ: Մեծ էր հանգուցյալի ծառայությունը հայ ժողովուրդին ու եկեղեցիին: Պատերազմի ծանր տարիներուն, Ան Սփյուռքի հայության հայրենասիրություն ներշնչեց ու մղեց օգնելու Միացյալ Ազգերու պատերազմական ջանքերուն՝ ընդդեմ հիտլերական ներխուժողներուն, գործեց Հայաստանյայց Եկեղեցիի միասնականության և էջմիածնի բարձր հեղինակության համար, պայքարելով ի նպաստ մեր ժողովուրդի հողային արդար դատին, սեր արծարծեց Հայրենիքի, հայ լեզվի, մշակույթի և ազգային ավանդությանց հանդեպ, ծառայեց ժողովուրդներու բարեկամության և աշխարհի խաղաղության վսեմ նպատակին: Փա՜ռք մեծ Հայրապետի վեհ հիշատակին:

Ատենապետ՝ ԱՐՄԵՆ ՄԻՐԻՃԱՆՅԱՆ
Ընդհանուր քարտուղար՝ ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Սրտի անհուն կսկիծով ողբում ենք մեր եկեղեցու Հոգևոր Պետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ի կորուստը: Ուղիղական ցավակցություններ էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին:

Հ. Բ. Ը. Միության Կենտրոնական վարչության նախագահ՝
ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը անփոխարինելի կորուստ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո համար: Ի դեմս Հանգուցյալի, հայ հավատացյալ ժողովուրդը կկորսնցնե Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Եկեղեցվո նվիրված Մեծ Կրոնապետ մը, հայրենասեր և ժողովրդասեր Մեծ Հայրապետ մը, որ Իր իմաստուն առաջնորդությամբ կամրապնդեր Հայ Եկեղեցվո միասնականությունը, կնորոշեր Սփյուռքի հայ հավատացյալ ժողովուրդը Իր հայրենասիրությամբ, զայն կհամակեր անկեղծ սիրով դեպի մեր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան և հավատով՝ դեպի խաղաղության հաղթանակը: Մեծագործ Կաթողիկոսի վախճանման տոթիվ, «Լրաբեր»ի խմբագրությանն և ընթերցողներու կողմեն կհայտնենք մեր խորին վիշտը և կմասնակցինք հայ հավատացյալ ժողովուրդի մեծ սուգին:

«ԼՐԱԲԵՐ»ի խմբագիր՝
ՄԱՐՏԻՆՅ

ԲԵՑՐՈՒԹԻՑ

Խորապես կսգանք մահը հայրենասեր և ազգանվեր Հայրապետ Գեորգ Կաթողիկոսի:

«ՁԱՐԹՈՆՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԲԵՑՐՈՒԹԻՑ

Անկեղծ, խոր ցավակցություններ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան առթիվ:

ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՈՒՄԲ

ՓԱՐԻԶԻՑ

Ֆրանսիայի հայ երիտասարդության միությունը, վշտացած նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ, ցավակցություններ է հայտնում և վերահաստատում է խորին նվիրվածությունը էջմիածնին:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷ

ԲԵՑՐՈՒԹԻՑ

Խորապես կսգանք դառնադետ մահը հայրենասեր և ազգանվեր Հայրապետ Գեորգ Կաթողիկոսի:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՍՅՈՒՐԻՈ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Անկեղծ ցավակցություններ Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Սիրիայի և Լիբանանի Հնչակյան կուսակցության անունից ցավակցություն ենք հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԲՅՈՒԶԱՆԴ ԿԻԼԻԿՅԱՆ,
ՆԱԶԱՐԵԹ ՂԱՐԻՊՅԱՆ

ՎՈՏԵՐՏԱՈՒՆԻՑ

Մասնաճյուղիս անդամները և Ամերիկայի հայոց Արաբկիրի հայրենակցական միության կեդրոնական հանձնախումբը խորապես վշտացած են օրհնակելի հայրենասեր, Հայր մեր, հոգևոր Հովվապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի վաղաժամ և անփոխարինելի կորստյան առթիվ:

ԱՐԱԲԿԻՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՓԱՐԻԶԻՑ

Շատ վշտացած ենք դառն կորստից, որ կրել են Հայոց Եկեղեցին և հայ ժողովուրդը: Մենք հայտնում ենք մեր ամենաանկեղծ ցավակցությունները և մեր ամենախոր հավատարմությունը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խոր վշտով լսեցինք Ամենայն Հայոց Գեորգ Կաթողիկոսի մահը: Սրտագին ողջակաեւ ցավակցություններ էջմիածնի միաբանության:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ռուս Պրավոսլավ եկեղեցու և անձամբ իմ անունից անկեղծ ցավակցություն եմ հայտնում Ծայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Թող Աստված Նրա հոգին արքայության մեջ արդարոց դասին արժանացնի և սիրելի Հայ եկեղեցուն շնորհի հանգուցյալին արժանի հաջորդ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ԹԲԻԼԻՍԻՑ

Խորին վշտով Մենք իմացանք Ձեր հեռագրից Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան մասին և շտապում ենք մեր անկեղծ ու խոր ցավակցությունը հայտնել Ձեզ:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻՑ

Խորապես վշտացած Գեորգ Կաթողիկոսի մահվան առթիվ, Աղեքսանդրիո Հույն Օրթոդոքս Եկեղեցին ցավակցություններ է հայտնում Հայոց Գերագույն Հոգևոր Խորհրդին: Աղոթում ենք Աստուծո՝ արժանի հաջորդ պարգևե:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԽՐԻՍՏՈՖՈՐՈՍ

ԴԱՄԱՍԿՈՍԻՑ

Խոր ցավակցություն ենք հայտնում Մեր եղբայր ի Քրիստոս, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Թող Աստված Նրա հոգին հանգստացնի երկնքի արքայության մեջ՝ որ Ամենասուրբն է հանգստանում: Հավիտ մնա Նրա հիշատակը:

ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԼՈՆԴՈՆԻՑ

Եղբայրական սրտագին ցավակցություններս Վեհափառ Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ՋԵՈՖՖՐԻ

ՊՐԱԳԱՅԻՑ

Ընդունեցեք մեր խորին ցավակցությունները Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՌՈՒՍԱԿԱՆ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ԵԼԻՖԵՐԵՑ

ՍՈՖԻԱՅԻՑ

Ընդունեցեք մեր խոր ցավակցությունը Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս երջանկաճիշատակ Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Թող կյանքի ու մահվան Տիրակալը հանգիստ պարգևե նրա խաղաղարար հոգուն՝ հավիտենական խաղաղության և երանության արքայության մեջ:

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԿԻՐԻԼ

ԲՈՒԵԱՐԵՍՏԻՑ

Հարությամբ Քրիստոսի օրինակով եղբայրաբար մասնակցում ենք Հայոց Կաթողիկոսարանի սգին՝ Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Աղոթում ենք Աստուծուն, որ նրա հոգին հանգչի արդարների մեջ:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ընդունեցեք իմ ամենախոր ցավակցությունը մեծանուն եկեղեցականի, հանուն խաղաղության բոցաշունչ մարտիկի և պատմության մեջ անմոռանալի Սրբազնագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ջերմեռանդորեն աղոթում ենք նրա պայծառ հոգու հանգստյան համար:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝
ՆԻԿՈԼԱՅ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հնածես-հնապամարների Մոսկվայի համայնքը խոր հուզումով ընկալեց դժնդակ լուրը Ամենայն Հայոց Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան մասին: Հայտնում ենք մեր ամենակարեկցական ցավակցությունները:

Համայնքի նախագահ՝
ՍԵՐԳԵԵՎ

ՌԻԳԱՅԻՑ

Ստանալով Ձեր բոթաբեր հեռագիրը Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան մասին, խոր ցավակցության զգացմունքներս եմ հայտնում Հայ Եկեղեցուն:

Ռիգայի կաթոլիկական միտրոպոլիտի տեղակալ՝
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՅՈՏՐ ՍՏՐՈԴՍ

ՏԱԼԼԻՆԻՑ

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական եկեղեցու անունից սրտագին ցավակցություն ենք հայտնում Հայ Եկեղեցու Գերագույն Պետի, խոշոր գիտնականի, խաղաղության գաղափարի անխոնջ պաշտպանի և բոցաշունչ հայրենասերի՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Աղոթում ենք հանգուցյալի հոգու խաղաղության համար: Թող հավերժ ապրի նրա հիշատակը:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ՅԱՆ ԿԻՑՎԻՏ

ՌԻԳԱՅԻՑ

Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ, մեր անկեղծ և խոր ցավակցությունն ենք հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին և Հայ Եկեղեցու բոլոր վշտահար հավատացյալներին, հեռավոր Մերձ-բալթյան Լատվիական Լութերական Եկեղեցու, Նրա Պետի և Դերագույն վարչության կողմից: Հայ Եկեղեցու հանգուցյալ Պետի, ականավոր աստվածաբանի և հոգևոր առաջնորդի, խաղաղության, քրիստոնյաների միասնականության և բոլոր ժողովուրդների բարեկամության սուրբ գաղափարի նախանձախնդիր պաշտպանի հիշատակը Լատվիական Ավետարանական հոգևորականությունը վառ կպահի և երախտագիտությամբ կհիշի:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ,
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ԳՈՒՆՏԱՎ ՏՈՒՐՍ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ավետարանական Քրիստոնյա բապտիստների Համամիութենական խորհուրդը, Սովետական Միության բոլոր քրիստոնյաների, ինչպես նաև ամբողջ Հայ եկեղեցու հետ միասին, խորապես ողբում է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը: Աղոթում ենք, որ երկնավոր Հովվապետը՝ Քրիստոս՝ նոր և արժանավոր Հովվապետ պարգևի Հայ եկեղեցուն:

Նախագահ՝ ԺԻԴԿՈՎ
Գլխավոր քարտուղար՝ ԿԱՐԻԵՎ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յոթերորդ օրվա ադվենտիստների Համամիութենական խորհուրդը իր ցավակցությունն է հայտնում Հոգևոր Պետի և խաղաղության գործի համար ռնխոնջ մարտիկի՝ Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Յոթերորդ օրվա ադվենտիստների Համամիութենական
խորհրդի նախագահի տեղակալ՝
ՅԱԿՈՎԵՆԿՈ

ՌԻԳԱՅԻՑ

Հոգեպես բաժանում ենք Ձեր մեծ կորուստը հանձին խաղաղության համար առաջավոր մարտիկներից մեկի, և բոլոր հավատացյալ հայերին մեր խոր ցավակցությունն ենք հայտնում ականավոր Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Ռիգայի Հիմնական համայնքի խորհրդի
նախագահ՝ ՎԱԿՈՆՅԱ
Քարտուղար՝ ՊԵՏՐՈՎ

ՌԻԳԱՅԻՑ

Նորին վշտով իմացա Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան լուրը: Անմոռանալի կմնան իմ սրտում մեր հանդիպումները Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիաներում: Հայտնում եմ իմ սրտագին ցավակցությունները Նորին Սրբության մահվան առթիվ:

ՊԱՍՏՈՐ ԱՐՎԻԴ

ԲԱԹՈՒՄԻԻՑ

Անձամբ իմ և ինձ հանձնված Բաթումի—Շեմոքմեդիի և Զկոնդիդիի թեմերի և հոգևորականության անունից որդիական սրտագին ցավակցություն եմ հայտնում ձեզ Հայկական ուղղափառ եկեղեցուն, նրա ակնածավոր և իմաստուն Հովվապետ, Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպան Գեորգ Զ.ի վերափոխման առթիվ: Թող Աստված խաղաղություն պարգևե հանգուցյալ Հայրապետի պայծառ հոգուն՝ փառավորյալ և սուրբ հայրապետների բազավորության մեջ, և Աստվածային եկեղեցու վշտացած հավատարիմ զավակներին շնորհե մխիթարություն ի Քրիստոս:

ԲԱԹՈՒՄԻԻ-ՇԵՄՈՔՄԵԴԻԻ ԵՎ ԶԿՈՆԴԻԴԻԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ԵՓՐԵՄ

ԿԱՌԻՆԱՍԻՑ

Քրիստոնեական խոր ցավակցություն եմ հայտնում Մայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Աղոթում եմ Ամենաբարձրյալին՝ երկնային արքայություն պարգևելու Գեորգ Զ.ին և աստվածային օրհնություն՝ ձեզ հավատացյալ ժողովրդին:

Էիտվական ՍՍՌ Կառնասի
և Կայշյադորի թեմերի կառավարիչ՝
ԻՈԶԱՍ ՍՏԱՆԿԵՎԻՉՈՒՍ

ԲԱՔՎԻՑ

Բաքվի Քրիստոնյա մոլոկանների հոգևոր համայնքի անունից խոր ցավակցություն ենք հայտնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Բաքվի Քրիստոնյա մոլոկանների հոգևոր համայնքի
գործադիր մարմնի նախագահ՝
ԿԱՇԻՐՍԿԻ

ԲԱՔՎԻՑ

Անձամբ իմ, Մուսուլմանների հոգևոր վարչության և Անդրկովկասի բոլոր հավատացյալ մուսուլմանների անունից խորին վշտով հայտնում եմ մեր ցավակցությունը էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին և բոլոր հավատացյալ հայերին՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ցավում եմ, որ իմ ծանր հիվանդությունը չի թույլատրում մասնակցելու թաղման հանդեսին:

Անդրկովկասի Մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ,
Շեյխ-ուլ Իսլամ՝
ԱԼԻ-ԶԱԴԵ ԱԽՈՒՆԴ ԱՂԱ

ՏԱՇՔԵՆՏԻՑ

Անձամբ իմ և Միջին Ասիայի և Ղազախստանի հավատացյալ մուսուլմանների անունից խոր ցավակցություն եմ հայտնում Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ՝
ՄՈՒՖՏԻ ԻՇԱՆԲԱԲԱԽԱՆ ԻԲՆ ԱԲԴԱԼՄԱԺԱՏԽԱՆ

ՋԱԳՈՐՍԿԻՑ

Մոսկվայի Հոգևոր ճեմարանն ու Սեմինարիան բաժանում են Հայ եկեղեցու անհուն վիշտը, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս, անմոռանալի Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ականավոր Հոգևորականի պայծառ հիշատակը անմոռաց կմնա նրա բազմաթիվ երկրպագուների սրտերում:

Ճեմարանի ռեկտոր, ավագ քահանա՝
ՌՈՒԺԻՑԿԻՑ

Ճեմարանի տեսուչ, պրոֆեսոր՝
ԴՈԿՏՈՒՍՈՎ

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Ձեզ հետ միասին խորապես ողբում ենք Հայ եկեղեցու իմաստուն Հովվապետ, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը: Ջերմագին աղոթում ենք Աստուծուն, որ նա հանգիստ պարգևի ամբողջ աշխարհում խաղաղության համար ականավոր և անխոնջ գործչի հոգուն: Թող Աստված պահպանե և ամրապնդե Ս. Էջմիածնի միաբանության ամբողջականությունը և Լուսավորչի գահին պարգևե Նորին Սրբության արժանի հաջորդ՝ ի փառս և ի պայծառություն Հայ եկեղեցու:

Քուբայիսիի եպիսկոպոս՝
ԳԱԲՐԻԵԼ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մոսկվայի Հրեական կրոնական համայնքը իր խոր ցավակցությունն է հայտնում Հայոց Եկեղեցու Պետի, խաղաղության անհնարին պաշտպանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Երկնային արքայություն՝ նրա հոգուն և ասվածային օրհնություն՝ նրա որբացյալ համայնքին:

Մոսկվայի Հրեական կրոնական համայնքի նախագահ՝
ՌԱԲԲԻ Ս. Մ. ՇԼԻՖԵՐ

ԿԻԵՎԻՑ

Կիևի Հրեական կրոնական համայնքը իր և բոլոր հավատացյալ հրեաների անունից խոր ցավակցություն է հայտնում Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Կիևի Հրեական կրոնական համայնքի նախագահ՝
ԲԱՐԴԱԽ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Անհուն կսկիծով ողբում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի կորստյան առթիվ: Սրտանց ցավակցություն ենք հայտնում էջմիածնի միաբանության:

ՏԵՄԻՐՃՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

ՓԱՐԻԶԻՑ

Ես խոնարհվում եմ այս ամենամեծ կորստի առաջ, որ կրեց հայոց ազգը:

Փարիզի հայոց թանգարանի հիմնագիր՝
ԱԼԲԵՐՏ ԱՇՋՅԱՆ

ՄԱԴՐԱՍԻՑ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մահը դառն կսկիծով համակեց մեր սրտերը: Թող Տերը մխիթարե Ձեր և միաբանության սրտերը և հարուցանե արժանավոր հաջորդ:

ԴԵՐԵԹԵՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Հայտնում եմ անհուն վշտակցություն՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Հայրապետի դառնակսկիծ մահվան առթիվ:

Նա հայ ժողովրդի համար եղավ ո՛չ միայն անսակյուռ Ազգապետ և Կրոնապետ, իմաստուն Եպիսկոպոսապետ և անձնդիր Հովվապետ, այլև գորովագութ Հայր, որ մեծագործություններով և առաքինություններով լի Իր երկարամյա կյանքը անսակարկ նվիրաբերեց հոգուտ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պայծառացման, նորաստեղծ Հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի առաջադիմության:

Որպես մեկը, որ բախտն է ունեցել բազմիցս արժանանալու հոգելույս հայրապետի գուրգուրանքին, որդիական ակնածանքով և վշտաբեկ սրտով խոնարհվում եմ Նրա հավետ պանծալի հիշատակի առջև:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Արգենտինահայ մշակութային միության երիտասարդները խոր ցավակցություն են հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս-Պատրիարք Գեորգ Զ.ի վախճանման առթիվ:

ԿՅՈՆՃՅԱՆ

ԲԵԼՔԻՑ

Որդիական վշտով, աղոթքը շուրթերիս, դագաղի առջև ծերադիր ողբում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը:

Թեմական խորհրդի անդամ՝
ՊՈՂՈՍՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Պարոն Գալուստ Կյուլպենկյանի կողմից ինձ հանձնարարված է հաղորդելու ձեզ իր խոր համակրանքը և ցավակցությունները ամբողջ Ազգի, մեր եկեղեցու և Ձեր միաբանության կրած մեծ կորստի համար՝ Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ:

Համայնական խորհրդի ատենապետ՝
ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ցավով լսեցի Վեհափառի վախճանման լուրը: Հայ եկեղեցիի և հայության կորուստը անդարմանելի է: Տերը լուսավորեն հոգին:

ՔՅՈՒՐՔՃՅԱՆ

ՆԻՍԻՑ

Անհուն վշտակցությամբ կիսնարհիմ անգուգական Հայրապետի մահվան առջև: Կցավիմ, որ խոր ծերությունս թույլ չի տար ճամբորդել:

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Խորապես վշտացած եմ իմ թանկագին ուսուցիչ և Հայր, Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Հայտնում եմ իմ անկեղծ ցավակցությունը:

ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉՈՐՅՈՓՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խորապես ողբում ենք Նորին Սրբության, մեր սիրելի Հոր և մեծագործ Կաթողիկոսի մահը, խոնարհվում ենք Նրա անյուն հոգի: Ցավակցություն ենք հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին և ողջ միաբանությանը:

ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱ,
ՔԱՋԻԿ, ԱՆԴՐԱՆԻԿ ԵՎ ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

ՌՈՍՏՈՎԻՑ

Հայտնում ենք մեր խոր ցավակցությունը Նորին Սրբություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԲՈՄԲԵՅԻՑ

Խորապես ողբում ենք Նորին Սրբության վաղաժամ մահվան առթիվ: Աստված հանգստություն տա նրա ոսկորներին և մշտապես անսասան պահի Մայր Աթոռը:

ԺՈԶԵՖ ԼԵՈՍԱՆՈՍ

ԹԲԻԼԻՍԻՑ

Սրտի անհուն կսկիծով ճայտնում ենք մեր խոր ցավակցությունը Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԴԻԼԱԿՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԹԲԻԼԻՍԻՑ

Խոր ցավակցություն ենք ճայտնում Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, խաղաղության համար անհնարին մարտիկ, Սրբազնագույն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ՄԻԼԱՆՈՅԻՑ

Խորապես վշտացած, աղոթում ենք Նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի հոգու համար: Խորին ցավակցություն ենք ճայտնում:

ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻՑ

Սրտանց ցավակցում ենք մեծ ճայրենասեր և Ամենայն Հայոց Հովվապետի մահվան առթիվ:

ՀԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Մեր կրոնի և հայ ժողովրդի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արժանավոր Հովվապետ Վեհափառ Հայրապետի ողբալի կորուստը սգալով, խորին վշտակցություն և ցավ զգացինք: Հուսանք, որ նույն արժանիքներով և անձնվիրությամբ օժտված փոխանորդ ունենանք:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐՏԻՆ

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս հրաժեշտիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Հայրապետի դատեմոկիկի մահվան առթիվ, Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահով շարունակվում են սատացվել ցավակցական հեռագրերը, որոնք կարվեն ամսագրի հաջորդ համարում:—ԽՄԲ.

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՍԳԻ ՄԵՋ Է

Մայիսի 9։ Կիրակի առավոտ է։ Կայծակի արագությամբ տարածվում է գույժը։ Ծանր հիվանդությունից հետո, 86 տարեկան հասակում, ի Տեր հանգչավ Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոսը։ Լուրը շանթում է և քարացնում յուրաքանչյուրին։ Բոլորի ուղեղներում սեռվում է մի միտք՝ այլևս չկա Գեորգ Զ.ը, Ամենայն Հայոց հայրենասեր ու մեծագործ Հայրապետը։

Կիրակի առավոտյան ժամերգությունն է գնում Մայր Տաճարում։ Վանքի բակը լցրել է ժողովրդի խուռներամ ամբոխը. բոլորի դեմքերին վիշտը փր խոր, անջնջելի կնիքն է դրել, շատերը ուղղակի հեկեկում են, խոսակցությունները շշնջոց են, ոչ մի ուրախ ճիչ, ոչ մի քացագանգություն, լսել են վշտալի լուրը...։ Ու խմում են Մայր Տաճարի զանգերը, հատ-հատ, սգավոր ու տրտում և իրենց տխուր, կեղծերուն թրթռոցներով գուժում Վեհափառի մահը։ Դրանք զանգի ստոն, անկյանք հնչյուններ չեն, այլ սգավոր սրտի տրտմաթախիծ հեկեկոցներ։ Այո՛, սգում է, սգի մեջ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայոց Առաքելական Եկեղեցին արժանապես սգում է Լուսավորչի արժանընտիր Գահակալի անդարմանելի կորուստը։

Կեսօրին Տաճարում սկսվում է պատարագը։ Սեներով է պատած Կաթողիկոսական Գահը, սևով է ծածկված Սվագ սեղանը, սգոն քողով է պատված Ս. Իշխան սեղանը։

Մեղմորեն առկայծում են մոմերն ու կանթեղները։ Արծաթե բուրվառը խնկաբույր անուշահոտությունն է տարածում օդում։ Դպիրները երգում են ավելի քան մեղմօրոր ու սգավից։ Տաճարը լի է քաղմությամբ։ Տեղ չկա շարժվելու։

Մի պահ խորանի վարագույրը փակ է, պատարագիչը սուրբ սպասն է տեղավորում։

Ներքևից երգում են «Ցորժամայ»։ Որքա՜ն թախիծ, որքա՜ն միաբոկական վերացում կա այդ երգի մեջ. «Ցորժամ մտցես ի սուրբ խորանն, անդ յիշեցես զմեր ննջեցեալսն»։ Երգի տրտմաթախիծ հնչյունները թրթռում են հնադարյան Տաճարի խնկաբույր կամարների տակ և հասնում յուրաքանչյուրին, սեռոտն դարձնում արտահայտությունները։ Մարդկանց միտքը չի ուզում հաշտվել ծանր կորստի հետ. ուղեղը մի բոպե նույնիսկ չի ուզում մտածել այդ մասին, բայց Վեհափառի մահը համառորեն մեխվում է ուղեղում, լեցնում մարդկանց ամբողջ գիտակցությունն ու այլևս զրկված արտասուքները դառնում են հեկեկանք, արցունքի ծով։

Սուրբ պատարագը շարունակվում է։ Պատարագիչ հայրը առաջին անգամ հիշում է «Ընդանկայիշատակ Հայրապետն Ամենայն Հայոց...»։ Սարկավագները քարոզում են՝ «Վասն հանգուցեալ Հայրապետին մերոյ...»։

Հայ Եկեղեցին որքացել է, չկա այլևս իր հոտի արթուն Դիտապետն ու Հովվապետը, բոլորի կողմից սիրված Հայրն ու խնամակալը, պաշտպանն ու զորավիգը։ Մեծ է վիշտը ու անպարսիակելի։

Սուրբ պատարագը մոտենում է իր ավարտին ու դպիրները երգում են հայոց պատարագի տխուր ու տրտմաթախիծ «Էջ՞ր, ողորմեա՛»։ Ու այդ պահին, հայոց պատարագի լացի ու սգի այդ տխուր ժամին, հայ տառապած հոգիները անցյալի հեռավոր, մշուշապատ, սևակնած երկնքից, նորից իջնում են մեր հոգիներին ու պատմում հայի անցյալի դարավոր վշտի մասին։

Սուրբ պատարագը վերջացել է. Ս. Էջմիածնի միաբանությունը, հայրակորույս, ազավոր ու տխուր, շրջապատել է Ս. Իշման սեղանը։

Հոգեհանգստյան արարողություններից առաջ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, գավազան ու խաչ ձեռքին, հայտնում է հավատացյալ հայ ժողովրդին Վեհափառ Հայրապետի մահվան մասին. «Զկա՞ մեր ամենքիս սիրելի ու պաշտելի Հայրը, հավիտենապես իր աչքերը փակեց Գեորգ Զ.-ը, ազգիս մեծագործ ու հայրենասեր Հայրապետը...»։ Արցունքները խեղդում են նրան, այլևս անկարող է խոսել։ Եվ այդ լացը վարակում է բոլորին։ Տաճարը լցվում է հառաչանքով։ Կատարվում է առաջին անգամ հոգեհանգիստ՝ Վեհափառ Հայրապետի հոգու համար։

Երեկոյան ժամերգությունից հետո դարձյալ կատարվում են հոգեհանգստյան արարողություններ։

Ուշ երեկո է։ Հավատացյալների բազմությունը չի հեռանում վանքի բակից։ Սպասում են բոլորը՝ թե երբ պետք է հանգուցյալ Հայրապետի մարմինը տեղափոխվի Վեհարան։

Վեհափառ Հայրապետը, նախքան Իր մահը, տառապելով ծանր հիվանդությամբ, տեղափոխվել էր Երևան և ռեսպուբլիկայի լավագույն բժշկական ուժերի հսկողության տակ, ամեն տեսակ հարմարություններով հանդերձ, պառկած էր Երևանի բուժարան-հիվանդանոցներից մեկում։ Վեհափառին ապաքինելու համար տրամադրված էին Մոսկվայի և Խարկովի լավագույն բժշկական ուժերը։

Ուշ գիշեր է և ահա Մայր Տաճարի զանգերը հառաչանքով խփում են և մութ գիշերը ավելի տխուր ու սգալի դարձնում։

Հանգուցյալ Հայրապետի մարմինը, բժիշկների հսկողությամբ և միաբանների ուղեկցությամբ Երևանից տեղափոխվում է Մայր Աթոռ — Վեհարան։ Թաղումը որոշված է մայիսի 27-ին, բժշկական ամեն տեսակ միջոցառումներ են կիրառված Հանգուցյալ Հայրապետի աճյունը պահպանելու համար։

Մայր Աթոռի միաբանությունը հսկում է մինչև լույս Վեհի դագաղի առջև։

Սահմանվում է կարգ — ամեն որ կեսօրին և երեկոյան կատարել հոգեհանգստյան կարգ՝ Տաճարում։ Կեսօրվա հոգեհանգստից հետո Մայր Աթոռի եպիսկոպոսները, վարդապետներն ու քահանաները պետք է Վեհարանում ամեն օր չորս ավետարաններից ընթերցեն, իսկ ամբողջ գիշերը մինչև լույս սարկավագներ, ըստ սահմանված հերթի, պետք է հսկեն և սաղմոս քաղեն։

Մյուս օրը, մայիսի 10-ին, ցերեկվա ժամը 12-ին, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, սգո պատշաճավորությամբ զգեստավորված, խաչվառով, վառ կերոններով, թափոր կազմած, «Անսիրգն Աստուածծ շարականի տրամագին հնչյունների տակ, շարժվում է Վեհարան։ Հայրապետի մարմինը դրված է Մաղկյա դահլիճում, Հայրապետական Գահին հանգեպ։ Կատարվում է հոգեհանգիստը։ Թախիծն ու վիշտը մղձավանջի ծանրությամբ իջել է դեմքերին։

Կնդրուկի կապտավուն մշուշը ոլորապտույտ բարձրանում է դեպի Մաղկյա դահլիճի նկարազարդ առաստաղը։ Դահլիճի պատուհաններից, թավշե վարագույրների արանքով, շեղակի ներս են ընկնում մայիսյան արեգակի վառ ճառագայթները, իրենց հետ բերելով մի տեսակ կենսալից, խաղաղ անդորրություն։ Նստում է Վեհափառը մահվան խաղաղիկ ու անվրդով քնով։ Վերջացել են հոգեհանգստյան սրբազան ու մեղամաղձիկ արարողությունները։ լռել են վերջին հնչյունները։ Բոլորը լուռ ու գլխիկոր սպասում են. ոչ ոք չի ուզում թողնել նստեցյալի սենյակը, քարացել, մագնիսացել են տեղերում։ Ու այդ անդորր, մեռելային լռության մեջ, կարծես հավիտենական խաղաղությամբ Վեհափառ Հայրապետի հոգին ոնկնդրում է Իր սիրելի միաբաններին և մի ակնթարթ անհերևութանում է մահը։ Բոլորի աչքի առջև կենդանանում, պայծառանում է Վեհափառի հոգեկան անաղարտ պատկերը և ոգեկոչում հոգիներին աշխատանքի ու պայքարի, սիրո և խաղաղության մեծ գործի համար։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱԶԳՈՎԻՆ ՍԳՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴԵՐՄԱՆԵԼԻ ԿՈՐՈՒՍԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում արտակարգ տրտմություն է տիրում, որովհետև ո՛չ ևս է բոլորից սիրված և հարգված Վեհափառը։

Հայրապետական որբի նման լացակումած հեկեկում է Հայոց Ընդհանրական Հայրապետության Մայր Աթոռը, որովհետև ո՛չ ևս է նրա Վեհափառ և ազգընտիր Գահակալը։

Անչափ սոգ է պատել Միածնափչ Մայր Տաճարն ու աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որովհետև ո՛չ ևս է հայ եկեղեցական նախիրապետության Սայրապետն Պատրիարք-Քահանայապետը, Հայոց Կրոնապետն ու Հովվապետը։

Ի խորոց սրտի սգում է և հայ ժողովուրդը, որովհետև ո՛չ ևս է հայրենասեր ու ժողովրդասեր Ազգապետը, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Հայրապետը։

***

Ապրիլը՝ գարնան առաջին ամիսն է, բնության վերակենդանացման ավետաբերը։ Ապրիլով են ավարտում ջերմիկ ու վենսանտրոդ օրերը, որոնք մխիթարություն և ապրելու հույս են ներշնչում՝ մանավանդ սառնաշունչ ձմռան սասսափություններից տառապած ախտավարակ հիվանդներին։

Բայց, այս տարի, ապրիլ ամիսը բոլորովին կորցրեց իր հոգեբուժիչ նշանակությունը Ամենայն Հայոց ծերունազարդ Հայրապետի համար, որ փոխանակ ապրելու հույսի, ծանրորեն հիվանդ,— թեև միշտ մասնագետ բժիշկների գուրգուրալից հոգատարության ներքո,— մահվան մղձավանջով անցկացրեց ապրիլյան օրերը։

***

Եկավ և կենտրոնաց մայիսը, Հայաստանի գեղեցիկ մայիսը։

Զմրուխտ հագան հայրենի սարերն ու ձորերը, դաշտերն ու հանդերը, այգիներն ու պարտեզները։

Ամեն կողմ ծիլ էր ու ծաղիկ, ամեն կողմ երգ էր ու ցնծություն։

Միծաղ կար դեմքերի վրա, ցնծություն կար սրտերի մեջ։ Հայաստանի ամբողջ տարածության վրա, արդյունավետ և ստեղծագործ աշխատանքի համերգն է բարձրանում դաշնալուր և խանդավառ։ Ներկայի լուսաշող իրականությունից և ապագայի ավելի պայծառ հեռանկարից բխող երջանկությունը թեվաբաց սավառնում էր ամենուրեք։ Միայն տրտում էին Հայոց Հայրապետի հիվանդության մասին մոտիկ լուր ունեցող անձինք, թեև Վեհը գտնվում էր ականավոր բժիշկների անմիջական հսկողության տակ։

Եվ ով տեղեկացել էր այդ տխուր լուրի՝ Վեհի հիվանդության մասին, առանց բացառության, սրտանց ցանկացել ու մաղթել էր Աստուծուն, որ Հայրենի բնության ծոցում փթթել սկսած կենսաբեր գարունը օգներ բժշկական միջոցառումներին և շուտով վերադարձներ առաքինազարդ Հայրապետի խանգարված առողջությունը։

Սակայն, ափսո՜ս, այլ կերպ էր տնօրինած Նախախնամությունը։ Երբ հզոր Սովետական Միությունում, անխորտակելի բարեկամությամբ և անսասանելի եղբայրությամբ իրար զոդված բազմազգ ժողովուրդների հետ հայ ժողովուրդն էլ խանդավառորեն նշում էր 1945 թվականի մայիսի 9-ին վերջ դրած Հայրենական պատերազմի փառապանծ հաղթանակի 9-րդ տարեդարձը, վախճանվել

էր Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրենասեր և մեծագործ Հայրապետը։

***

Մահկանացու էր, ուստի՝ վաղ կամ անադան՝ պիտի մահանար։ Բայց դեռևս անժամանակ էր այս՝ իսկապես անդարմանելի կորուստը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու համար, Ս. Էջմիածնի Հայրապետական Մայր Աթոռի և Սփյուռքի հայութեան համար։ Նրանք, մանավանդ աշխարհի ներկայումս ապրած քաղաքականապես աննպաստ և փոթորկոտ օրերին, դեռ շատ կարիքն ունեին հոգեւոր Հայրապետի իմաստուն ղեկավարության և առաջնորդության։

Անգամ հիվանդության չարագուշակ օրերին, հոգեկան անհուն հրճվանքով, Նա խոսում էր այս և հաջորդ մի քանի տարիների ընթացքին իրագործվելիք մեծ ձեռնարկների և ծրագրերի մասին, որոնք աղգային խոշոր նշանակություն ունեն։

Մեռոնօրհնությունը, որի մեծահանդես կատարման բոլոր տնօրինություններն տրել էր անձամբ, տեղի պիտի ունենար այս տարի, սեպտեմբերին, աշխարհի չորս ծագերից Էջմիածին ժամանելիք հայ հավատացյալների ներկայությամբ։

— Մեռոնօրհնությունը առիթ է ստեղծելու Սփյուռքի Մեր հարազատ զավակներից շատերին, որպեսզի գան և սեփական աչքերով տեսնեն վերածնված Մայր Հայրենիքի անանխորնթաց վերելքն ու բարգավաճումը։ Ամենայն Հայոց Հայրապետության և Հայ Եկեղեցու զարթոնքը, հայ ժողովրդի երջանիկ առօրյան,— խանդավառորեն ասում էր Նա, հարելով Իր դեռևս պայծառարիր հայացքը ստեղծագործ շինարարությամբ հարազվարթ մայրաքաղաքի լայնածիր համայնապատկերի վրա։

Հայ Եկեղեցու պայծառացումը, Հայ Եկեղեցականության, ի մասնավորի Էջմիածնի միաբանության արժանավոր դիրքի բարձրացումն ու ամրացումը, Էջմիածնի և Կիլիկիայի Հայրապետական Աթոռների միջև ստեղծված միասնության ամրապնդումը, Սփյուռք դարձած հայության մեկտեղումը հայրենի երկրի վրա, Ամենայն Հայոց Հայրապետության իրավունքների և առանձնաշնորհումների պահպանման ապահովումը, նախորդող երանաշնորհ կաթողիկոսների երազած և միշտ էլ երազ մնացած Մայր Տաճարի նորոգումը՝ Նրա մտահոգության առաջնահերթ խնդիրներն էին։ Այդ պատճառով էլ Նա հայրաբար գուրգուրում էր Հոգևոր Ճեմարանի, սարկավագների, հայ եկեղեցականների վրա։ Նրանց ամենափոքր հաջողությունից մեծապես ուրախանում էր Նա։

— Այս տարի, օգտվելով Մեռոնօրհնության հանդիսակատարությունից, անձամբ պիտի կատարեմ արտասահմանում և երկրում իրենց ազգօգուտ ծառայություններով ու անբասիր կյանքով փայլած մի շարք բարեշնորհ վարդապետների եպիսկոպոսական օծումը՝ ի պայծառություն մեր սիրելի եկեղեցուն,— հրճվալի ասում էր Նա և ավելացնում, թե՝ միևնույն նպատակով, ի նպաստ Հոգևոր Ճեմարանի, ապահովվելու էին նյութական լայն միջոցներ, պատրաստելու համար բարձր դաստիարակությամբ օժտված եկեղեցականներ։

Երջանկահիշատակ Վեհափառը հրճվում էր նվիրապետական երկու Աթոռների միջև ստեղծված սերտ գործակցությամբ և միասնությամբ։ Այդ գործակցությունն ու միասնությունը առավել ևս ամրապնդելու և հավերժացնելու նպատակով նախատեսում էր կազմակերպել եկեղեցականների փոխայցելություններ՝ երկու կենտրոններում միանգամայն, ինչպես նաև Էջմիածնում գումարել համազգային-եկեղեցական ժողով՝ երկու Աթոռներին պատկանող թեմերից ընտրված պատգամավորներով։ Նրա ամենաբուռն իղձերից մեկն էր Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռի վրա բաղված տեսնել երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի արժանավոր հաջորդին։

— Իսկ ինչ վերաբերում է Սփյուռք դարձած հայության Մայր Հայրենիքում հավաքման հարցին, դա՝ Իմ կոչն է, ինչպես ասել եմ ուրիշ առիթով էլ։ Ամեն ժողովուրդ ունի իր հայրենիքը։ Հայ ժողովրդի սրբություն սրբոց Հայրենիքն էլ Հայաստանն է, որտեղ ի վերջո պետք է հավաքվեն քաղաքական ֆժրախտ դեպքերի բերմամբ աշխարհով մեկ ցրիվ ընկած հայերը,— նշում էր Նա ակներև հուզումով։

Գերագույն երջանկության հուրը փայլում էր Նրա մեղմանուշ աչքերի մեջ, երբ ավիտում էր, թե՝ արդեն ձեռք էր բերել Ամենայն Հայոց Հայրապետության բազմադարյան իրավունքների և առանձնաշնորհումների անսայթաք շարունակումը երաշխավորող տնօրինությունները։ Հետո, բազուկները երկնամբարձ, որպես նոր օրերի Սիմեոն ծերունի, փա՞ռք էր տալիս Աստուծո, որ Իրեն շնորհել էր հարազատ Պետության բարձր կարգապրությամբ. Մայր Տաճարում սկսած հիմնական նորոգությունների առաջին աշխատանքները տեսնելու բախտավորությունը։ «Աստված թող այնպես անի, որ Ես մինչև կյանքի վերջին րոպեն պահեմ գիտակցությունս»,— եզրափակում էր Նա Իր խոսքերը։

նրանց կցորդելով հանուր աշխարհի խաղաղության և մարդկության եղբայրության ի նպաստ հոգէբուխ աղոթքը։

Նախախնամությունը, իրոք, իրականացրեց Նրա վերջին խնդրանքը։ Նա, Իր կյանքի մինչև վերջին րոպեն, պահեց լրիվ գիտակցությունը։ Վախճանվելուց սակավաթիվ ժամեր առաջ Նա ընդունեց մի խումբ շնորհալի սարկավագներին և նրանց խրատեց՝ երբե՛ք չդավաճանել Հայրենիքին, մի՛շտ հավատարիմ մնալ Հայաստանյայց Եկեղեցուն և Մայր Աթոռին։

Օժտված բազմապիսի անստգյուտ առաքինություններով, Նա սիրվեց ժողովրդից և հարգվեց բոլորից անխտիր։ Ահա ինչո՞ւ իրավունք ուներ այն հավատացյալ պառավ հայուհին, որ Երևանի Ս. Զորավար եկեղեցու փողոցում, լսելով Հայոց մեծագործ և մեծահոգի Հայրապետի վախճանման բոթը, վրդովահար ու տրտմաթախիծ, հառաչեց.

— Դժբախտությո՞ւն...

Այո՛, հայ ժողովրդի համար մեծ դժբախտություն է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանվելը։ Բայց մահացածների համար հուսակորույս ողբալը՝ ապագայի հեռանկար չունեցող տգետ մարդկանց վայել է։ Հայ ժողովուրդը հաճախ է ենթարկվել նման և ավելի ծանրակշիռ դժբախտություններ, սակայն երբեք չի հուսահատվել և չի ընկճվել. ընդհակառակը՝ մնացել է բարձրաճակատ և անկուն։ Նա միշտ էլ ունեցել է փյունիկ թռչնի պես մոխիրներից վերահառնելու ինքնածին ուժ։ Փա՛ռք՝ վերածնված Հայաստանի և նրա մայրական ծոցում վերազարթնած և վերակազմակերպված Նուաստ Հոտաւորշահիմն Մայր Աթոռի լուսապայծառ ներկան։

Ազգովին սգալով հանդերձ իմաստուն, մեծագործ, հայրենասեր և աղգանվեր Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Զորեքյան Կաթողիկոսի անդարմանելի կորուստը, անխախտ վստահություն ունենք, որ հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն պիտի հաջողվի շուտով ընտրել Նրա՝ և՛ իրականացման ճանապարհի վրա դրված, և՛ դեռևս չիրականացած՝ ազգօգուտ և հայրենօգուտ իղձերն իրականացնող արժանավոր հաջորդին։

ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱԲՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վանքի շրջապատը թախծի և ուրտությունի մեջ էր։ Միապանության առօրյա խոսակցությունները պտտվում էին Վեհափառ Հայրապետի ծանր հիվանդության առանցքի շուրջը։ Ժողովրդից հաճախակի նեկայացուցիչներ էին գալիս Վեհափառի առողջության վիճակն իմանալու համար։ Առավել ծանր էր մեր, սարկավագներիս վիշտը։ Վեհափառին կորցնելու միտքն անդամ մեզ սարսափ էր ներշնչում։ Հաշտվել, թեկուզ հնարավոր և անխուսափելի փարծված նման մի դառն կորստի հետ, երբ անսայթաք համոզմունքն ունես, թե նրանով դուրս կընկնի անկյունաքարը դարերով սրբագործված մի կառույցի, մի հաստատության՝ ինքնին ողբերգություն է։ Սակայն Վեհափառին վերջին հրաժեշտը տալու հավակնությունը չունեինք, քանզի դժվար էր հաշտվել վերոհիշյալ ողբերգական կորստի հետ, երբ դեռ Վեհափառը ապրելու և գործելու լիակատար վճռականություն ուներ։ Նախապես եղած այցելությունների առթիվ Իր կողմից ցուցաբերված անմահանջ լավատեսությունը, անսպառ կորովը, մեզ հայ ժողովրդին և Հայաստանյայց Եկեղեցուն սպասարկելու զգացմունքն ու գիտակցությունը ներշնչելու ոգևորությունը երբեք մեզ չէին տանում դեպի Վեհափառ Հայրապետի հնարավոր մոտալուտ կորստյան հնթադրությանը, չնայած որ Նրա շափազանց հյուծված դիմագիծը գուշակել էր տալիս, որ Նա հիվանդ էր, և ծանր հիվանդ...

Գործի պարտադիր բերումով մայիսի 7-ին, առավոտյան, Գուրգեն սարկավագը եղել էր Վեհափառի մոտ։ Նկատելով Նրա վատառողջ և անմխիթար վիճակը, հակառակ իր ինքնազսալ բնավորության, չէր կարողացել չարտասվել։ Ոչ մի խոսք չէր արտասանել Վեհափառը։ Գուրգեն սարկավագը երեկոյան վերադարձավ Էջմիածին։ Արտակարգորեն գոնատ և այլայլված էր նրա դեմքը։ Հայտնեց մեզ եղելությունը։ Ոլորեցինք անմիջապես այցելություն տալ Վեհափառին։ Ճանապարհին, մինչև Երևան, գրեթե ոչ մի զարտուղի խոսակցություն։ Յուրաքանչյուրիս դեմքին նկատվում էր ներքին ծանր ապրումների դրոշմը։ Մեր հոգեկան աշխարհը մռայլ էր։ Ինչ որ դաժան կանխազգացում ճմլում էր մեր սիրտը։ Համբրնթաց, բարձրանում էինք հիվանդանոցի աստիճաններով։ Յուրաքանչյուրիս երևակայության մեջ ուրվագծվում էին քիչ հետո մեր աչքի առաջ բացվելիք տեսարանի հնարավոր տարբերակները իրենց կոկիծով, գուցե և ողբերգությամբ։ Նախասրահում նստած էին հոգեշնորհ Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը և բժիշկները։ Բոլորիս նայվածքներն էլ ինքնաբերաբար շրջում էին նրանց դեմքերին և, մեր սպասածին հակառակ նկատում՝ զոհունակություն և անդորր հոգեվիճակ։ Հայր Գեորգը մեզմ ժպիտով դիմեց մեզ. «Եկել եք Վեհափառին տեսության...»։ Եվ երբ մենք գլուխներս շարժեցինք, դրական պատասխանի փոխարեն, ավելացրեց. «Շա՞տ ապրեք, շա՞տ լավ եք մտածել»։

Գեորգ հայր սուրբը, Վեհափառի հավանությունը առնելուց հետո, հանդարտ քայլերով առաջնորդեց մեզ Վեհափառի սենյակը։

Յուրաքանչյուրիս սիրտը արտակարգ հուզմունքից կարծես ընդհատ-ընդհատ էր բաբախում։ Վեհափառի մոտն անցնելու նախկին համարձակությունն ու ինքնավստահությունը չունեինք։ Ամեն մեկը մեզանից վարանում էր առաջինը նեղա մտնել։ Դժվար էր առաջինը տեսնել Վեհափառին՝ նախապես ունեցած զանազան ենթադրություններից հետո։ Համենայն դեպս հավաքեցինք մենք մեզ և խորը երկյուղածությամբ, հանդարտ քայլերով մոտեցանք Վեհափառի մահճին...։

Այդ պահը վերհիշելն անդամ առատ արցունք է բերում իմ աչքերից։ Որքա՞ն բան էր փոխվել Վեհափառի դեմքին... ո՞ւր էր Նրա կենսուրախությունը... ո՞ւր էին Նրա արտակարգորեն հմայիչ քմծիծաղն ու ժպիտները... Ո՞ւր էին Նրա մանր աչքերի վառվռուն փայլը, կրակը, իմաստությունը... Անիծված հիվանդությունը ի՞նչ դաժան դեր էր խաղացել... Որքա՞ն ծանր էին այդ հիվանդության հարվածները...

Համբուրելով վերմակի վրա թույլ ձգված Աջը, կանգնեցինք մեկ շարքի վրա այնպես, որ առանց գլուխը շարժելու տեսներ բոլորիս։ Առաջին հերթին Իր ցուցամատի հաղիվ նկատելի շարժումով սկսեց մեզ հաշվել։

— Երեք... հատ էլ... Մոսկվայում...,— խուլ շշնջալով վարողացավ ընդհատ-ընդհատ խոսել և ապա վերին շրթունքի փոքր պրկումով գոհունակություն արտահայտելով, ավելացրեց.

— Բա...վական է...

Այս չափազանց սուղ արտահայտությունն էլ բավական եղավ, որ մենք Վեհափառ Հայրապետի միտքն ու հույսերը կարողանայինք լրացնել ու հասկանալ։ Ի՞նչ վարդագույն հույսեր էր կապած մեր աճի ու նվիրվածության, մեր մտքի ու հոգեկան համեստ արժանիքների հետ։ Հայրական ինչպիսի՞ անսպառ գուրգուրանքով էր շրջապատել մեզ և ինչպիսի՞ սեր, զոհվել գիտնալու զգացմունք էր ներշնչում մեզ... «Բավական է...», — շշնջաց Նա։ Այդ նշանակում էր, քիչ չէր թիվը, որով կարող կլինի մեր եկեղեցին շենալու և պայծառանալու։

Հայոց Հայրապետը Իր վերջին ճիգերն է հավաքում Իր սիրատուն սարկավագների հետ զրուցելու։ Նրա գունատ շրթունքները շարժվում են։ Լսելի են լինում բառերի անջատ վանկեր։ Քարացած՝ լսում ենք, ջանալով ամեն կերպ ամեն ինչ հասկանալ, ինչ որ Վեհափառի խմաստուն ուղեղի մեջ կառուցվում ու զարգանում էր, ինչ որ Նրա հոգու մեջ փոթորկվում էր...։ Զապված էր մեր շնչառությունը մեր աչքերի մեջ վառվող արցունքների հետ...

Նատերու ազդանշան է տալիս։ Հավատակ պատշաճության՝ համակերպում ենք, առիթ չտալու համար կրկին ազդանշանի, որը ուժ էր խլում հյուծված Հայրապետից։ Մի քանի րոպե դադար։ Ստեղծվեց չափազանց հուզիչ պահ, քանի որ լռությունն ու տեսարանի տրամությունը առավել հնարավորություն են տալիս մեր սրտի ու մտքի աշխատանքներին։ Քակվում է Վեհափառի հետ կապված լավագույն հիշատակների կծիկը։ Որքա՞ն առույգ, կենսուրախ, փարթամիրան էր Նա և այժմ որքա՞ն դժգույն ու հյուծված է։ Աստվա՞ծ իմ, ի՞նչ շուտ է մաշվում կյանքը...։

Վեհափառը դարձյալ փորձում էր խոսել, բայց արդեն մեղմ ձայն կար և բառերի մեջ որոշ հստակություն էր մտնում։ Բոլորս էլ հանկարծակի սթափվեցինք և սկսեցինք ավելի հակվել դեպի Վեհափառը։

— Ժողո...վուրդը ավե...լի շատ ձեզ է... սիրում։ Դուք էլ... նրան պի...տի սիրեք։ Դուք երիտա...սարդ եք, դուք եր...ջանիկ եք...։

Այս արտակարգորեն հուզիչ նախադասության ամեն մի բառի մեջ Վեհափառը այնքան խորը զգացմունք ու սեր, այնպի՞սի դառը ափսոսանք էր դնում, որ մեր յուրաքանչյուրի հոգին ուժգին սարսռում էր։ «Սիրել ժողովրդին», այդ արդեն միս և արյուն էր դարձել մեր մեջ շնորհիվ Վեհափառ Հայրապետի ամենօրյա թելադրանքների։ Բայց Նա երբեք մեզ չէր ասել՝ «Դուք երիտասարդ եք, դուք երջանիկ եք...», քանի որ երիտասարդ չլինելու ողբերգությունը հատկապես այսօր էր ապրում, հիվանդանոցի տրտում մահճի մեջ։

Մինչ այդ, վերահսկիչ բժշկուհիներից մեկը ներս մտավ, զարմացած, թե ինչպե՞ս է պատահել, որ այսքան մարդ ներս են թողել և նուշնիակ պատրաստվում էր մեզ դուրս հրավիրել, երբ Գեորգ հայր սուրբը նրան ասաց, որ մենք Վեհափառ Հայրապետի սիրատուն զավակներն ենք և թե Ինքը՝ Վեհափառն է թույլատրել մեզ ներս գալ։

— Ներողություն, ներողություն եմ խնդրում։ Համենայն դեպս առիթ մի տվեր հուզմունքի և խռովակցության,— ասաց ու դուրս եկավ բժշկուհին։

Վեհափառն սկսեց մեղմորեն և խորհրդաբար ժպտալ։

— Նա դեռ... չի ճա...նա...չում ձեզ։

Մի քանի վայրկյան անց, շարունակեց հետևյալը.

— Ճեմա...ռանդ... մեծ պար...տա...կա... նություններ ունի...։ Պիտի ավե...լի արդյու...նա...վետ դառնա։ Ուսանողների թիվը պի...տի բազ...մացնել։ Արտա...սահ...մանից էլ 20 հոգի պիտի բե...րել տանք։

Առավել ինքնավստահ ու հասկանալի դարձան Նրա խոսքերը։ Տարօրինակ է, արդեն ինչ որ կենդանություն էր նկատվում դեմքին և երբեմն թեթևակի ժպտում էր։

— Կառա...վա...ությունը ո...բոշ դու...մար է բաց թո...ղել Մայր Տաճարի վերա...նո...րոգու...թյան համար, որպես պատ...մական և ճար...տարա...պետական կա...բևոր հու...շարձան։ Դա պատմական խոշոր դեպք է։ Շնոր...հակալ ենք Կա...ռավա...րությունից։

— Շնորհիվ Ձերդ Մեծութեան,— շտապեց հիշեցնել մեկնից մեկը հուզված ձայնով։

— Շնոր...հիվ Մեր ուղ...ղամտու...թյան, — լրացրեց Նա հաղիվ լսելի ձայնով և Իրեն յուրահատուկ համեստությամբ։

Այս մի կերպ հաջողված նախադասությունները սկսեցին խանդավառել Վեհափառին և Նա փորձեց դադար շտալ, սակայն, հակառակ Իր կամքին, ստիպված եղավ նահանջել։ Չնայած այդ խանդավառությունը մեզ մխիթարում էր, բայց Նրան խնդրեցինք հանգստանալ։ Մենք, որ ամենայն ուշադրությամբ հետևում էինք Նորին Ս. Օծությանն ամեն մի շշունջին, դիմագծերի թույլ խաղերին և Ս. Աջի հաղիվ-հաղ նկատելի շարժումներին, այս վերջին վայրկյանները մեր նկատած փոփոխությունը, չգիտես ինչու, մեզ հույս էր ներշնչում, որ Վեհափառը դեռևս ապրելու վճռականություն և կարողություն ուներ։ Այս հավատը մեզ խորապես խանդավառեց նույնիսկ և ես ինքնաբերաբար ասացի։

— Ձեր բոլոր ելույթները կյանքի են կոչված։ Ձեր թանկագին առողջությունն է անհրաժեշտ մեր ժողովրդին, մեր Եկեղեցուն և մեզ։ Դժվարությունները հաղթահարելու մեծ փորձ ունեք և վստահություն ենք հայտնում, որ այս դժվարագույն պահն էլ կհաղթահարեք...

Գուցե ևս շարունակեի, եթե Վեհափառը չընդհատեր ինձ հետևյալ շեշտված խոսքերով.

— Հենց դա էլ Ինձ հար...կավոր էր... մի՛... մի՛... հուսա...լքվեք։ Եղեք լա...վատես։ Էջմիա...ծինը տառապա...լից ու փշոտ ճանապարհ է անցել, բայց կեն...դանի է մնացել ու կմնա...։ Միրե...ցեք Էջմիածինը. մե՞ղք է Էջ...միածինը։

Այս սրտառուչ քաջալերությունն ու պատգամը, որ գալիս էր հաղիվ լսելի շշունջներով մահճին գամված հայոց Մեծ Հայրապետից, նոր ուժ ու անձնվիրության շնչակրող հատատակամություն էր ներշնչում մեզ։

Կրկին անգամ Վեհափառին խնդրեցինք հանգստանալ, սակայն մերժեց։

— Ար...տասահ...մանյան Իմ պան...դուխտ որդիներս հո...գեպես կմիսի...թար...վեն... լսելով այս վե...բա...նորոգու...թյան մասին։ Ցավ է Ինձ համար, որ իրենց իսկ աչ...քերով չեն... տեսնում։ Շնոր...հակալ կլի...նեն ամբողջ հոգով մեր Հայրենի կառա...վարությունից։ Կլինեն զար...մա...ցողներ ևս, բայց նոքա իրենք իրենց կպա...տաս...խանեն...։

Ցանկացանք տեղվույն վրա դրի առնել Վեհափառի խոսքերը, քանի որ Նա սկսեց համեմատաբար ավելի հեշտությամբ և հասկանալի մրմունջով արտահայտվել, սակայն անպատեհ նկատեցինք, գտնելով, որ լավ չէր անդրադառնա Վեհափառի տրամադրության վրա։

Հակառակ Վեհափառի բուռն ցանկության ու ճիգերին, հակառակ Նրա ինքնամոտության, Նա զգացնել տվեց, որ շատ է հոգնում և զգում է հանգստանալու պարտադիր անհրաժեշտություն։

Մենք ոտքի կանգնեցինք։ Մի քանի վայրկյան լուռ ու անթարթ հայացքով նայեց մեզ վրա։ Որքա՜ն սեր և գուրգուրանք կար, որքա՜ն իմաստ ու թելադրություն կար այդ նայվածքի մեջ։ Աստվա՜ծ իմ, ինչպիսի՜ հուսիչ հրաժեշտ էր... Վեհափառը երբեք այդքան դժբախտ չէր եղել։

— Տեր ընդ... ձեզ։ Ես...բեմն Ինձ հի...շեցեք...,— կիսախուսափ աչքերը քիչ բանալով շշնջաց Նա։

Մեր վերջին ճիգերն էինք հավաքում՝ պրոպելու համար մեր արտասուքը։ Չենք փորձում հեռանալ, մի վայրկյան ավելի վայելելու համար Վեհափառի թանկագին ներկայությունն ու հայացքը։ Բոլորս զգում էինք, որ ինչ որ բան էր փուլ գալիս մեր վառվող սրտերի մեջ։ Մենք ապրում էինք լավագույն ու մեծագույն հարազատին կորցնելու թեկուզ ենթադրության դառն ողբերգությունը։ Պատկերացնո՞ւմ եք մեր ցավը, մեր անհուն կսկիծը...։

Լուռ երկյուղածությամբ համբուրում ենք Վեհափառի հյուծված Աջը և համբրնթաց, առավել երկյուղածորեն հետ-հետ գնում դեպի դուրս։

Շիկացած պողպատով գրվեց մեր սրտերում Հայոց մեծագործ Հայրապետի վերջին խոսքը.

— Ներ...բեմն Ինձ հի...շեցեք...։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Ապրիլի 25-ին (Կրկնազատկի կիրակի), տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան քարեկրոն Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։ Տաճարը լեցուն էր հավատացյալների խուռն բազմությամբ։ Երգում էր Մայր Աթոռի քառաձայն երգեցիկ խումբը։

***

Ապրիլի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց անգլիական ուսանողական պատվիրակությունը, որին գլխավորում էր Անգլիացի ուսանողների ազգային միության պրեզիդենտ Ֆրեդ Ջարվիսը։

Վանքում պատգամավորության անդամները հետաքրքրվեցին հնադարյան Մայր Տաճարի պատմությամբ, ճարտարապետական կառուցվածքով, մանրանկարչությամբ և այլն։ Հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցահնագիտական թանգարանում, ուր դիտեցին հաղվագյուտ հնադարյան եկեղեցական սպասներ, զգեստներ և այլն։ Ամենուրեք հյուրերին ուղեկցում և սիրով մանրամասն բացատրություններ էին տալիս միաբանների քարտուղար Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը և միաբանության այլ անդամներ։

Պատգամավորության անդամները առանձին հարցումներով հետաքրքրվեցին Մայր Աթոռի տնտեսական հաստատության՝ Հոգևոր Ճեմարանի վիճակով, Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերության հարցերով։ Բոլոր դեպքերում միաբանության անդամները սիրալիր և տուշադիր պատասխաններով քավարարեցին հյուրերի հարցասիրությունը։

Վերջում հյուրերը եղան Վեհարանում, ուր դիտեցին հայոց կաթողիկոսներին նվիրված արվեստի զանազան գեղեցիկ նմուշ նվերները և հայկական մանրանկարչության առանձին դրվագներ։

Մեկնելուց առաջ հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանության կողմից իրենց ցույց տրված ընդունելության և իրենց ստացած լավագույն տպավորությունների համար։

***

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց նաև Ֆիններական պրոֆմիութենական պատգամավորությունը, որը ՍՍՌՄ հրավեր էր եկել ՀԱՄԿԽ-ի հրավերով։ Պատգամավորությանը գլխավորում էր՝ Ֆինլանդիայի պրոֆմիությունների կենտրոնական վարչության քարտուղար Օլավի Յարվեյան։ Պատգամավորության կազմում կային մեծագի աշխատողների և տպագրիչների պրոֆմիությունների ներկայացուցիչներ։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում։ Ամենուրեք նրանց մանրակրկիտ բացատրություններ էին տալիս և հարցերին պատասխանում միաբանության անդամները։

Իրենց ստացած լավագույն տպավորությունների համար շնորհակալություններ հայտնելուց հետո, հյուրերը մեկնեցին Մայր Աթոռից բավարարված գոհունակությամբ։

***

Մայիսի 2-ին, Աշխարհամատրան (Կանաչ կիրակի) տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում Ավագ սեղանի վրա հանդիսավորապես մատուցվեց սուրբ պատարագ։ Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան գարեգրին Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Այդ օրը շրջականերից եկել էին բազմաթիվ ուխտավորներ և այցելուներ։ Եկածների մեծ մասը այցելեցին Տաճարին կից եկեղեցահնագիտական թանգարանը, ուր արժեքավոր եկեղեցական սպասների և զգեստների մասին բացատրություններ լսեցին Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսից և միաբանության այլ անդամների կողմից։

***

Մայիսի 16-ին, «Տօն Երեման Ս. խաչի» օրը, Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Սրբազանը սուրբ պատարագի ավարտից հետո սրտառուչ քարոզ խոսեց հանգուցյալ Հայրապետի կյանքի և գործունեության վերաբերյալ։ «Վեհափառը մեր օրերի ամենախոշոր դեմքերից մեկն էր,— ասաց նա,— հանձին Նրա Հայ Առաքելական եկեղեցին կորցնում է իր ամենակարկառուն կաթողիկոսներից մեկին, որն իսկապես Մեծագործ կոչվեց ժողովրդի կողմից՝ Իր հսկայական ջանադիր գործունեության համար։ Վերջում, սրբազանը իր խոսքն ուղղելով էջմիածնի սղակիր միաբանության և վշտացյալ ժողովրդին, ասաց. «Աղոթե՛նք, սիրելիք, որ Տերը արդարոց օթևանին արժանացնի մեր երջանկահիշատակ սիրելի Հայրապետի հոգին, թո՛ղ մեր երանելի հայրապետների հետ միասին Գեորգ Զ.-ի հոգին խնդա երկնքում, ամեն»։

Քարոզից հետո կատարվեց հոգեհանդիստ, Ս. Իշման սեղանի առջև առանձին սև թավշով պատած սեղանի վրա դրված էին Կաթողիկոսական խորհրդանշանները՝ կաթողիկոսական խաչն ու գավազանը, կոնքեռը, խույրը, արտախուրակները և այլն։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ*

Գ. Ժամատուն

* № 25. *Արևմտյան ճակատին (դրսից), հյուսիսային լուսամուտից աջ, երկու խաչակիր քարի ձախ կողմում և խաչերի տակ.*

1 Յուսովն Այ(-) ես
2 Տիկինս միաբա-
3 նեցա սբ ուխտի-
4 ս և եռու զիմ
5 հոգոյ արդ-
6 իւնս յեկեղ-
7 եցիս և ես Յովանէս առաջնորդ սբ ուխտ-
8 իս կամակցութբ եղբարցս սանմանեցաք
9 ի տաւնի Կա[ռագ]այ խաչի]ն:Բ: պատար]-
10 ագ զմին Սու..... ով ..... դատի ....

Քարը ցածի մասում հողմահարված է։

* № 26. *Նախորդից մի քարաշար ցած.*

1 ՈՂԴ
2 մեք Թարեկս...
3 գա ծեր [եղ]բարք
4 մեծ յուս[ով միա]
5 բանեցաք Ամածն-
6 [իս և] տուաք:Խ:դան-
7 եկան Դ(-)Թ և միաբ-
8 [անքս ե]տուն մեզ[:Բ:] ժամ եղիականեն ... շաբաթ
9 աւր[ն]

1. Քարը խիստ հողմահարված է։ Փակագծերի մեջ առնված բառամասերը լրացված են կա՛մ գրերի պահված հետքերով և կա՛մ ըստ իմաստի։
2. 8-րդ շարքում Բ թվագիրը լրացրել ենք համաձայն սովորական սակագնի, որովհետև նվիրված է 40 դահեկան։ Սակագինը պարզ է թե՛ նախորդ և թե՛ հաջորդ արձանագրություններից։

* Շարունակված ամսագրի 1954 թվականի փետրվարի, մարտի և ապրիլի համարներից։

✻ *№ 27. Նախորդից քիչ ցած, դեպի ձախ.*

1 Ես Գե-ոան մեծ յուսով
2 [միաբանե]ցա Ա՛ծած[նիս և ե]տու Ի՛ դաճեկան
3 Դաւիր և միայրանէս
4 եռուն Ա.ժամ եղիականն
5 շաբ(ա)թն աւրն ով խափանէ
6 դատի յԱ՛յ

✻ *№ 28. № 26-րդ արձանագրությունից աջ.*

1 [Յ]ուսովն Ա՛յ ես Մլ[ք]ե միայրան-
2 եցա և էտու զիմ հոգո արդիւնս յ-
3 եկեղեցիս հայր Յովանես և միայ-
4 բանէս եռուն.Ա.ժամ ի տաւնի Տապանակ-
5 ին ով խափանէ դատի յԱ՛յ

№ 29. Ժամատան արևմտյան մուտքի ձախ կողմում, վերևը (դրսից).

1 Յուսովն Ա՛յ ես Մխիթար և ամուսին իմ Մամ-
2 ան էտու ընծա ի շինուրի եկեղեցոյս և
3 մեր սպասաւորք սրբոցս սահմանեցաք ի
4 տունի խաչին Թ:շաբաթ աւրն:Թ:
5 պատարագ արասցեն յանու-
6 ն նոցա անխափան

№ 30. Նախորդից ցած, արևմտյան մուտքին կից.

1 Ես Հոգէդեղս.Ի.
2 դեկան էտու յեկեղ-
3 եցիս Յովանէս և միաբ-
4 անքս էտուն ինն:Ա:ժամ
5 Սուրիասենց տաւնին
6 կատարիչք աւրհնին
7 յԱ՛յ

№ 31. Ժամատան արևմտյան մուտքի շրջանակի վերի մասում.

1 Ի թ:ՁԻԴ:յուսովն Ա՛յ | ես Միքաես և fo.....ոյ արդիւնս |
յեկեղեցիս հայր
2 Յովանէս և այլ մի | աբանքս ետ...[մին]ն Սիքարին |
և մինն fոյրոցին:.

1. Ուղիղ գծերով ցույց է տրված շարքերի բեկման տեղը։
2. Կետերով նշված տեղերում ցարերն ընկած են։

№ 32. Ժամատան արևմտյան մուտքի ճակատաքարի վրա.

1 ՈՂ թիս
2 Ես Թարեյս մեծ յուսով
3 միայրանեցայ Ա՛ծածնիս և ետու

Արձանագրությունն ընդհատված է. իբրև շարունակություն № 33-ն է։

№ 33. Նախորդի տակ, իբրև շարունակություն.

1 Յուսովն Այ ես Սերոբ և Թոմա քահանա-
2 յք և եղբարք զմեր հոգոյ արդիւնս տուաք ի
3 սբ Աստծինս հայրս Յովանէս և միաբանքս ե-
4 տուն մեզ զԹ:Թոմային|պատարագ ի տաւնի Անտոնի որ խա-
5 փանէ մեր մեղացն պատտական է և դատի յԱյ: Թվ:ՉԹ:

4-րդ շարքում Բ Քվագիրը խոշոր գրով է, իսկ դրանից առաջ գրված Գ-ն՝ փոքր։ «Թոմային» անունը փորագրված է այդ Քվագրերից վեր՝ շարքամիջում։ Ըստ երևույթին սկզբում պայմանավորված են եղել 2 պատարագ, յուրաքանչյուր եղբորը մեկական. հետագայում դրանցից Թոման ավելացրել է յուր բաժիներ և անունն էլ շեշտել շարքամիջում, որով ստացվում է երկու եղբայրներին միասին 3 պատարագ, որոնցից 2-ը Թոմային։

№ 34. Ժամատան արևմտյան մուտքից աջ, վերևում.

1 Ես Գազանս մեծ յուսո-
2 վ միաբանեցա Աստծն-
3 իս և եռու:Ի:դանեկան
4 հայր Յովանէս և մի-
5 աբանքս եռուն ինն:Ա:
6 ժամ ի տաւնի Վարագայ
7 սբ խաչին կատարիչքն
8 աւրհնին յԱյ

№ 35. Նախորդից ցած, անմիջապես մուտքի կողքին.

1 Յուսովն Այ ես
2 Գժուտ ի ժամ մանն-
3 ու զիմ հոգս արդի-
4 ւնս տվի էկեղեց-
5 իս Յովանէս մի-
6 այբանքս էռուն Յա-
7 կոբայ տաւնին:Ա:
8 ժամ կատարիչքն աւր-
9 հին յԱյ

№ 36. Նախորդի աջակողմում.

1 Ես Գեր քն եզկանց
2 միայբանեցայ Ա[ծ]-
3 ածնիս և էռու:Կ:դա-
4 հեկան Դաւիթ և մի-
5 այբանքս էռուն:Գ:ժ-
6 ամ ի տաւնի սբոյն Գէ-
7 որգայ ով խափանէ
8 դատի Տէ

3-րդ շարքում Քվագիր Կ-ի տեղում առաջ փորագրված է եղել Ի, իսկ 5-րդ շարքում՝ Գ-ի տեղում՝ Ա։ Ուղղումները կատարված են նախորդ Քվագրերի վրա, ըստ որում նախորդ Քվագրերի հետքերը և դրանց կողքերին գույգ կետերը պարզ երևում են։

✱ № 37. Նախորդից աջ, գույգ խաչեր ունեցող քարի աջ կողքին.

1 Ի Նոր Կի-
2 ռակէն
3 մին պա-
4 տարա-
5 գ Վաշ-
6 ին է ա-
7 նխափ-
8 ան

✱ № 38. Ժամատան արևմտյան նակատի հարավային լուսամուտից ներքև.

1 Յուսովն Այ(—) ես Յակոբ միաբանեցայ
2 և եռու զիմ նոգոյ արդիւնս յեկեղե-
3 ցիս յառաջնորդութա հաւր Յովանի-
4 սի և սահմանեցին ինձ ի տաւնի սրբոյն
5 Յակոբայ։Ա։պատարագ ով խափանէ
6 դատի ի Տէ

3-րդ շարքում «հաւր» բառի Ա գիրը նիշ չունի, փոքրագրված է Ս։

№ 39. Ժամատան ներսում, հյուսիսային պատի վերևում, լուսամուտից աջ. դրերի փոսերը կարմրադեղով ներկված.

1 Ես Վաչէ Անբերբեցի իշխանաց իշխան եռու վեց հարիւր
2 դահեկան ի շինութէ զաւթիս ձեռամբ Գրիգոր վարդապետին և
3 յառաջնորդութէ հաւր Դաւթի և սոքա եռուն զՂազարու տաւնն
4 և զՇաոգարդարն զամեն եկեղեցիս ինձ պատարագեայ զՔս ով խա-
5 փանէ իմ մեղա-
6 ցն տէր է ամէն

5-րդ և 6-րդ շարքերը փոր-գրված են որմնակամարի վրա։ Այդ վերջավորու-թյունը Ջալալյանը չի նկատել։

№ 40. Նախորդի տակ.

1 Ես Գրիգոր վարդապետ որդի Աբասս իշխանի մեծ յուսով միա-
2 բանեցա Ամածնիս և եռու պատուական զրեանք և խաչ մասամբ
3 յառաջնորդութէ հաւր Դաւթի և միաբանացս և սոքա եռուն զ-
4 տաւն Մոկեանց զամեն եկեղեցիս ինձ պատարագել զՔս ով խափան-
5 է կամ զխաչ կամ զգրեանս հանել շանա պատժեսցի յԱ։ՈՉՉ

Ջալալյանը թվագիրը կարդացել է ՈՄՉ։

№ 41. Նախորդի տակ.

1 Այս գիր յիշատակի սահմանելին Երիտասարդի որ ի բազում որոգ-
2 այթից նեղե(ա)լ դիմե(ա)ց Ամածինս և ի նոյն աւր յանկարծակի
3 հասե(ա)լ հրաման Աստուծոյ և նոր(ա)լ յերիվարէն ել ի կենցաղոյս և էրոլ
4 կսկիծ ծնողաց և ամուսնոյ և նոր(ա)լ էտուն զինչս նորա Ամածա-
5 ինս Դաւիր և միաբանս էտուն։Գ։ժամ ի տաւնի Հոգոյն զաչստեանն ով
6 խոփվ դատի յԱ(—) ՈՂՐ Թ

№ 42. Ժամատան հյուսիսային պատի յուսամուտի ցածի մասից ձախ.

1 Ցուսով Այ ես Խարիբէկ և ամուսին իմ Նանա զմեր հոգոյ արդիւնս տուամ ի
2 շինութի եկեղեցոյս և զիմ այգին յարմունիքն այգեպանով հայրս Յովանէս
3 և միաբանքս ետուն մեզ պատարագ զամէն եկեղեցիքս ի տունի Վարագա
4 խաչին ով զայգին խլէ կամ զժամն խափանէ դատի յԱյ

№ 43. Նախորդի տակ, դրերի փոսերը կարմրագեղով ներկված.

1 Ես Շրուան մեծ յուսով միաբանեցա Ածածնիս և ետու։Խ։դանեկան յեկեղեց-
2 իս առաջնորդս Դաւիթ և միաբանքս ետուն ինձ։Բ։աւր ժամ ի տունի
Յովանեուն որ ա-
3 արէմտին ով խափանէ իմ մեղացն տէր է

№ 44. Նախորդի տակ.

1 Ես Արեվիկ մեծ յուսով միաբանեցա Ածածնիս և ետու ի դանեկան ի գ-
2 ուիքս առաջնորդս Դաւիթ և միաբանքս ետուն ինձ.Ա.ժամ ի տունի Յովան-
3 նուն որ տարէմտին ով խափանէ իմ մեղացն տէր է

✱ *№ 45. Ժամատան հյուսիս-արևելյան սյան խոյակի արևմտյան ճակատին.*

1 Յառաջնորդութիւ Դաւթի գրեցաւ
2 Բ։ժամ Սիսանէ ի Նոր Կիրակէն։Ա։ժամ Ք-
3 ուրդկանն և Ա։Գերգա։որ որ խափ-
4 անէ դատի յԱյ։ի ՈՀՉ թու.։.

№ 46. Նույն խոյակի հարավային ճակատին.

1 Ես Մխիթարիչս միաբանեցա Ածածն-
2 իս և ետուի.Խ.դանեկան հայր Յովան-
3 էս և միաբանքս ի սբ Յակոբա տաւ-
4 նին — Բ ժամ է գրեցին ով խափ-
5 անէ դատի Տնէ

1. 3-րդ շարքում «Յակոբա» անվան առաջին Ա-ի նիշը չկա, փորագրված է Ա։
2. 4-րդ շարքում Բ թվագրի տեղում առաջ եղել է Ա, որի հետքը մնացել է, հետևապես 2-րդ շարքի Ե թվագիրը սկզբում պետք է եղած լինի Ի։

№ 47. Ժամատան հարավ-արևելյան սյան խոյակի ճակատին.

1 Ցուսովն Այ ես Յովանէս առա(ջ)-
2 նորդ սբ ուխտիս կամակցութիւ եղբարց-
3 ս սանմանեցաք յամ Զատկին Ա պ-
4 ատարագ յանուն Խաչուքէ
5 տրատցեն անխափան

№ 48. Ժամատան հարավ-արևելյան վերին խորանի պատին.

1 Ի թու ՈՀԳ
2 Կամաւն Այ գրեցաւ մին պատ-
3 արագ սբ Յրիոբա տաւնին
4 Սարգսի քա ճայի որ խափ-
5 անէ դատի յԱյ

** № 49. Հարավ-արևելյան ցածի խորանի պատին, աստիճանների տակ.*

1 Նոր Կիրակէին
2 մին պատարագ
3 Յովանիսի քա-
4 հանայի է ով
5 խափանէ դատի յԱ

** № 50. Նախորդի տակ.*

1 Ի նոյն աւուր մին
2 պատարագ երանշ-
3 անի անխափան

№ 51. Ժամատան արևմտյան պատին, մուտքից ձախ.

1 Այս մեր գիր է Դրի և միայ-
2 բանացս որ տուաք Ապիին որ էկ
3 յո(ւ)ս(ո)վ և միայբանեցաւ
4 Ածած(ն)իս

№ 52. Նախորդի տակ.

1 Ես Տէրունականս միաբանեցա
2 և ետու զիմ հոգոյ արդիւնս յ-
3 եկեղեցիս Յովանէս և միաբանմս
4 ետուն.Ա.ժամ ի տաւնի Ք(ր)իստափորի

№ 53. Նախորդի տակ.

1 Ես Մեհենազս միաբանեցայ և ետ-
2 ու զիմ հոգոյս արդիւնս յեկե-
3 ղեցիս և սոմայ սանմանեց-
4 ին Ա ժամ ի տաւնի Նունեայ
5 և Մանեայ

** № 54. Նույն տեղում, նախորդից աջ.*

1 Ես Շարուճի միաբանեցա և ետու
2 զիմ հոգոյ արդիւնս յեկեղեց-
3 իս և սոմա սանմանեցին:Ա:ժամ ի տ-
4 աւնի սրբոց Գայիանեանցն

№ 55. Ժամատան արևմտյան մուտքի ճակատաքարի վրա, ներսից.

1 Թվ ՉԻէ
2 Յուսովն Այ ես Յոհանէս և ամ-
3 ուսին իմ Տիկին միաբանեցաք Ածածն-
4 իս ետուաք զմեր հոգոյ արդիւնս յեկե-
5 ղեցիս Յովանէս և միաբանմս ետուն մեզ:Ա:ժամ ի տաւնի
6 սրբոց Գայիանեանցն կատարիչքն աւրհնիր յԱ

Այս արձանագրության մեջ, փորագրի անփութության հետևանքով, շատ տեղերում չեն փորագրված գրերի որոշիչ գծիկները։ Այդ գրերը չարված են սովորական տառերով։

Դ. Փոքր եկեղեցի

№ 56. Մուտքի ճակատաքարի վրա.

1 Ի թուականս Հա(յոց)
2 ես յամենայնի մեղապարտս
3 Յոհանէս ամէն միաբան եղբարցս կամա-
4 կցուրբ և ծեռնտուութիւն.զեկեղեցիս յիմ
5 ծեռադացն և եղբարցն որ այժմ ենչեցեալ են յան-
6 ուն շինեցի:Վասակա.և Շուշկանն.Հասանա.և
7 Վաշէի:և խնդրեմ մեծ յուսով և հաւատով: և զևն-
8 ածինն և զՔի շարշարանսն բարեխօսս ունիմ, որ յետ իմ
9 սպասաւորեն տեղոյս:զի Զատիկն աւրն նոցա աւասցեն ժամ
10 որ խափանէ նզովս առցէ:կատարիչքն աւրնեին ի Տէ:ամէն:

Ե. Գերեզմանատուն

** № 57. Մի վեղարաձև տապանաքարի վրա.*

1 Այս տապանս
2 հայր Թորոսինն այա
3 ողորմի նոգուն
4 Թ. ՌՃԿԱ.

** № 58. Մի տափակ տապանաքարի վրա։ Գլխի կողմում մի ձիավոր, ցածր մասում երկու կանթավոր, երկարավիզ կուժ, որոնցից մեկը կտուցով և ծաղկենկար։ Կուժերի մեջտեղում սկիհաձև, բարձրանիստ բաժակ. դրա վերևը՝ ծալված, հանգուցավոր և ծոպավոր մի իր, աջ անկյունում մի սնամ։*

Երկու քանդակների մեջտեղում փորագրված է.

1 Եմ ես դապան-
2 ի աստ ինի:Քաս-
3 պար եմ. որդի Դու-
4 ռմիշի: ով կարդաց-
5 ողք զմեզ յիշի
6 Տր յարգաութնն ի
7 մեզ բաշխի: Ռ. Մ.
8 Բ. թվի

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻՆ

Երջերս Սովետական Հայաստանի Պատկերասրահը Բուխարեստից ստացավ չորս արժեքավոր նկարներ։ Այդ նկարներից առաջինը, որը ներկայացնում է «Հովիվների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին», մեծադիր նկար է, պատկանում է 16-րդ դարի Վենետիկյան դպրոցի խոշոր ներկայացուցիչ, իտալացի նշանավոր նկարիչ Յակոպո դա Պոնտե Բասանի (1510—1598 թ. թ.) վրձինին և ուղարկվել է որպես նվեր ռումինահայ թեմական խորհրդի կողմից։ Սնայալ երեք նկարները, որոնցից առաջինը՝ «Տաճարի ներքին տեսարան»՝ գործ ֆլամանդական նկարիչ Պիեր Նեեֆսի (1570—1651 թ. թ.), երկրորդը՝ «Անտառը» պեյզաժը, գործ՝ ծագումով իսպանացի, ֆրանսիական նկարիչ Դիազ դը լա Պենայի (1807—1876 թ. թ.) և երրորդը՝ ընտանեկան մի տեսարան, գործ՝ 19-րդ դարի ֆրանսիական անհայտ նկարչի, որպես նվեր ուղարկվել են Ռումինական մտավորական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ և արվեստի հայտնի քննադատ Գրիգոր Զամբաքչյանի կողմից։

Յակոպո դա Պոնտե Բասանի «Հովիվների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին» մեծադիր և չափազանց արժեքավոր նկարը, որը մինչև վերջին տարիներս «Հայ մշակույթի տան» թանգարանի բաժնում էր ցուցադրված, 1928 թվականին որպես նվեր էր ստացվել Բուխարեստի «Հայ մշակույթի տան» նախորդ հիմնարկությունից՝ «Ռումանահայ կեդրոնական մատենադարանի կողմից։ Նվիրատուն Մոլդավիայի Ֆրլտիչեն քաղաքում ապրող ռումինահայ հին հայկական Թադոս (Tatos) ընտանիքի անդամ օրիորդ Զինկա Թադոսն էր, որը նվիրելուց հետո մի տարի անց, 1929 թվականին վախճանվեց[1]։ Այդ նկարը նրա մոտ մնացել էր իր պապերից[2]։

---

1. „Ararat", 1929, № 5-6. Bucureşti.

2. Թադոս ընտանիքը մեկն էր Մոլդավիայի հայկական հնագույն ընտանիքներից, որոնց համար ավանդվում է, որ Անի քաղաքից պետք է որ դաղթած լինեին։ Սկզբում Թադոս կամ Թուդորովիչ ընտանիքը հիշվում է Ֆրլտիչենից ոչ շատ հեռու գտնվող Մոլդավիայի Ռոման քաղաքից, և ուր հայերը դեռևս վաղ ժամանակներից եկած ու հաստատված էին մեծ թվով։ Մեր ձեռքի տակ գտնվող մի շարք աղբյուրներից երևում է, որ 1828 թվականի փետրվարի 28-ին Յասսիից (Ցաշ) Մոլդավիայի իշխան Յոան Մանգուլ Ստուրզան, հատուկ իշխանական գրով Ռոմանում բնակվող Թադոսին կամ Թուդորովիչին առանձնաշնորհումներ է տալիս, ազատելով մի շարք հարկերից։ Փաստաթղթից երևում է, որ Թադոսը նախապես ստացել էր գնդապետի զինվորական աստիճան։ 1856 թվականի հունիսի 28-ին Գրիգորե Դ-հիկա իշխանը նրան ազատում է ֆինանսական տուրքերից։ Թադոս ընտանիքի մեջ հայտնի եղող համառոտ ճյուղագրությունից երևում է, որ այդ ընտանիքը խնամիական կապեր էր հաստատել Միսիր, Կապրի, Գրոմակու, Զատիկ, Գոյլավ, Բուիկլիու, Փեսիմ և այլ ռումինահայ հին ընտանիքների հետ (տես „Ioan Neculce", 1926—1927, Yaşi)։

Թադոս ընտանիքից հատկապես անմոռանալի մի անուն թողեց Ֆրլտիչեն քաղաքի բժշկապետ դոկտ. Գաբրիել Թադոսը (1879—1927 թ. թ.), որը Ռեվիրատուի հոգեալրն էր։ Գաբրիել Թադոսը իր նախնական ուսումը ստացել էր Յասսիի հայազգի Խաչերես Գաբրագայի նշանավոր դպրոցում, ուր սովորում էին նաև այլ ազգերի պատկանող աշակերտներ, որոնցից շատերը հետագայում ամենաբարձր պաշտոնների արժանացան։ Այնտեղ ռումիներեն, ֆրանսերեն և գերմաներեն կողքին դասավանդվում էր նաև հայոց լեզուն։ Գաբրիել Թադոս իր ուսումը շարունակում է

Գրիգոր Զամբաքջյանը, որը նվիրել է վերոհիշյալ նկարներից երեքը, վաղուց է որ ծանոթ է ռումինական շրջանակներում որպես արվեստի քննադատ։ Գրիգոր Զամբաքջյանի գրչին են պատկանում մի շարք աշխատություններ, որոնք վերաբերում են մասամբ ֆրանսիական և հատկապես ռումինական նշանավոր նկարիչների գործերին, որոնցից են՝ «Արդի Ֆրանսիացի նկարիչներ» (ցուցահանդեսի կատալոգ, 1935 թ., ֆրանսերեն լեզվով), «Արվեստի էջեր» (1934 թ.), ռումինացի նշանավոր նկարիչների շարքից՝ «Պալատիա» (1945 թ.), «Պետրաշկու» (1945 թ.), «Ն. Գրիգորեսկու» (1946 թ.) և այլն։

Վերոհիշյալ առանձին ուսումնասիրություններից դուրս բազմաթիվ են նաև Գրիգոր Զամբաքջյանի այն հոդվածները, որոնք վերաբերում են հայ արվեստի պատմությանը։ Դրանցից պետք է հիշել՝ «Հայկական գորգերի արվեստը», «Փորագրությունը հայ տպագրության մեջ», «Մոլդավիայի հայկական եկեղեցիներում գտնվող հին հայկական վարագույրները», «Հայկական ճարտարապետության ոգին», «Հայ-

Հովիվների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին
(Գործ՝ իտալացի նկարիչ Ջակոպո Դա Պոնտե Բասանի)

Ցասիում, իսկ Բուխարեստում ավարտում բժշկական ֆակուլտետը, որտեղից մեկնում է Փարիզ՝ է՛լ ավելի կատարելագործվելու համար։ Տարիների փորձնական անխոնջ աշխատանքով գրավում է Ցելտիչենի հիվանդանոցի գլխավոր բժշկապետի պաշտոնն ու արժանանում բոլորի գնահատանքին։ („Curentul Fălticenean", 1937, № 13—14)։ Նրա վարձած ժողովրդականությունը հասնում է այնտեղ, որ նրա վաղաժամ մահը և թաղումը վեր է ածվում ողջ նահանգի բնակչության սգի օրի. տասը հազարից ավելի մարդիկ ուղեկցում են նրա աճյունը մինչև գերեզմանատուն, իրենց հարգանքի վերջին պարտքը բերելով գյուղացիությունը հայ տպագրության մեջ, «Մոլդավիայի հայկական եկեղեցիներում գտնվող հին հայկական վարագույրները», «Հայկական ճարտարապետության ոգին», «Հայ-

այս տիպար մարդուն։ Նրա մահից գեռ տարիներ հետո ժողովուրդը, լմոռանալով նրա հիշատակը, գյուղացիության և բնակչության բոլոր խավերի կողմից հավաքված լումաներով, բժշկապետի մահից 12 տարի անց, 1939 թվականին, իր երբեմնի գլխավորած հիվանդանոցի առջև կանգնեցնում է Գաբրիել Թադոսի կիսանդրին („Curentul Fălticenean", 1939, № 73)։ Թադոս ընտանիքից էր նաև Իենիկ Թադոսը, որ մի ժամանակ եղել է Ցելտիչենի բաղաքապետ և «Ինքա կուլտուրալայի նախագահ. մի ուրիշը՝ Թեոդոր Թադոսը, ծանոթ է որպես հրապարակագիր և այլն։

կական ճարտարապետությունը և Արևմուտքը», «Լեոնարդո դա Վինչիի ճանապարհորդությունը Հայաստանում», «Արդար Պալթազար որպես նկարիչ և արվեստի քննադատ» և այլն։

Բազմաթիվ են նաև Զամբաքչյանի գանազան առիթներով կարդացած զեկուցումները, որոնցից են. «Ռումինական խոշորագույն բանաստեղծ Մ. Էմինեսկուի, ռումինացի հռչակավոր նկարիչ Ն. Գրիգորեսկուի, ռումինացի նկարիչ Պետրաշկուի, ֆրանսիական նկարիչ Ցրա Գոնարի, ֆրանսիական նկարիչ՝ Օգյուստ Ռենուարի մասին, «Կուստուրայի կապը ռումինական և հայկական ժողովուրդների միջև» և այլն։

Արվեստի վաստակավոր գործիչ և Սովետական Հայաստանի արվեստի հայտնի տեսարան Դրամբյանի հետ ունեցած մեր տեսակցության ժամանակ, Բուխարեստից ստացված վերոհիշյալ չորս նկարների մասին նա մեզ բարեհաճեց հաղորդել հետևյալը.

«Առաջին նկարը, որն ամենից մեծն ու արժեքավորն է՝ «Հովիվների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին», հայտնի Վենետիկյան դպրոցի 16-րդ դարի նկարիչ Յակոպո Բասանի գործն է։ Բասանը ժամանակակից է Տիցիանի և Տենտորիտի և նրա արվեստը շատ ընորոշ է Վենետիկյան դպրոցի համար։ Եթե այդ շրջանում Ֆլորենցիա-



Տաճարի ներքին տեսարան

(Գործ՝ ֆլամանդական նկարիչ Պիեր Նեֆսի)

1. Գրիգոր Զամբաքչյանը առաջին նախագահը եղավ Բուխարեստի «Հայ մշակույթի տան» (1944 թ)։ Նա իր նկարների ճոխ հավաքածուն, մեծ մասամբ ռումինացի նկարիչների գործեր, իր սեփական թանգարանի հետ միասին նվիրեց ռումինական պետությանը։ Նվիրատվությունը ստորագրելու օրը Գ. Զամբաքչյանի թանգարանում ներկա գտնվեցին նաև Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Ազգային մեծ ժողովի նախագահ դոկտ. Պետրու Կրոզան և կառավարական մի շարք անդամներ։ Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետը Զամբաքչյանի թանգարանը իր իրերով վերածեց թանգարանի և վերանվանեց «Զամբաքչյան թանգարան», իսկ թանգարանի փողոցն էլ վերանվանվեց «Զամբաքչյան թանգարանի փողոց»։ Գրիգոր Զամբաքչյանը, որպես արվեստի պատմության լավագույն գիտակներից, սրանից հետո էլ շարունակում է մեծ եռանդով իր օգտաշատ գործը։ Մենք հաճախ ականատես ենք եղել Գ. Զամբաքչյանի խանդավառ և նրբաճաշակ բացատրություններին՝ յուրաքանչյուր ոճով, դրը ռումինացի կամ հայ ուսանողությունը և կամ արվեստասեր հասարակությունը այցելել են իր թանգարանը։ Գ. Զամբաքչյանը զուգընթաց շարունակում է նաև իր գիտա-հետազոտական աշխատանքները։ Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիան, հարգելով հա-

յում և Իտալիայի մի շարք քաղաքներում արվեստը անկում էր ապրում, ընդհակառակը Վենետիկում այն ծաղկում էր. իսկ Բասանը հենց այդ Վենետիկյան դպրոցի դեմքերից էր։ Նրա նկարների կոլորիտը շերմ է։ Մեզ մոտ Հայաստանի Պատկերասրահում եվրոպական նկարների բաժինը բավականին հարուստ է. բայց իտալականը և հատկապես վերոհիշյալ շրջանը այնքան ճոխ չէ. այժմ Բասանի նկարը կլինի այդ շրջանի գլուխգործոցը։ Այդ մի նկարը առանձին իսկ վերցրած, իր էությամբ տալիս է Վենետիկյան դպրոցի ամբողջական տպավորությունը։

«Ինչ վերաբերում է Գրիգոր Զամբաքջյանի նվիրած նկարներին, ամենից առաջ պետք է նշել Նեֆիսի, ֆլամանդական 17-րդ դարի այդ նկարչի բավականին մեծ նկարը, որը ներկայացնում է մի եկեղեցու ներքին տեսարանը։ Նեֆիսը հայտնի է որպես եկեղեցիների ներքին տեսարանների նկարիչ. փաստորեն իր գծած եկեղեցիները չկան, այլ ինքն է ստեղծում, այն էլ շատ մանրամասն կերպով և մտցնում է ֆիգուրաներ և այլն։ Այս նկարը՝ դա 19-րդ դարի ֆրանսիական նկարիչ Դիազի գործն է. Դիազը ֆրանսիական Բարբիզոնյան դպրոցի ղեկավարներից էր։ Այդ դպրոցի ղեկավարը համարվում է Թեոդոր Ռուսոն, բայց Դիազն էլ կարևոր տեղ է գրավում։ Նկարը ներկայացնում է պեյզաժ անտառում՝ մութ կոլորիտով։ Վերջին նկարը 19-րդ դարի 60—70-ական թվականների ֆրանսիական անհայտ նկարչի գործ է։ Նկարի բովանդակությունը վերցված է 18-րդ դարից։ Ժանրային նկար է։

«Ուշագրավ է, որ այս երրորդ անգամն է, որ Գր. Զամբաքջյանը արժեքավոր նկարներ է նվիրում Սովետական Հայաստանի Պատկերասրահին։ Նրա նախորդ ուղարկածները ևս շատ արժեքավոր գործեր էին. օրինակ՝ նկարիչ Բուտենի գործերից միայն մեկ հատ կա Մոսկվայում, իսկ երկրորդը արդեն Երևանում գտնվածն է։ Նույնպես նախորդ ուղարկածներից՝ Մոնտեշելլիի գործը հետաքրքիր է նրանով, որ այդ նկարչի գործերից այժմ միայն երեք հատ են գտնվում ամբողջ Սովետական Միությունում. մեկը՝ Մոսկվայում, երկրորդը՝ Սարատովում և երրորդը՝ Երևանում։

Հայաստանի Պատկերասրահի դիրեկտոր Պարսամյանը մեզ ասաց, որ Պատկերասրահը ունի ճոխ հավաքածու նկարների, ինչպես հայկական և ռուսական, այնպես էլ արևմտա-եվրոպական նշանավոր նկարիչների գործերից և ստացված սույն նոր նվերները նպաստում են Պատկերասրահի արևմտա-եվրոպական բաժնի է՛լ ավելի ճոխացմանը. մի բաժին, որը մեծ հեռանկարներ ունի և մեծ կարևորություն է ընձեռված նրա ճոխացման համար։

Մենք կարծում ենք, որ արտասահմանյան առաջավոր հայ արվեստագիտները և արվեստասեր հասարակությունը կատարելով իրենց հայրենասիրական պարտքը, իրենց ուղարկած նորանոր արժեքավոր նվերներով մոտի հետզհետե սատարեն Սովետական Հայաստանի Պետական Պատկերասրահի է՛լ ավելի ճոխացմանը։

Վերջերս տեղեկացանք, որ ամերիկահայ նկարիչ Հարությունն Տիրիթը, կատարելով իր հայրենասիրական պարտքը, Սովետական Հայաստանի Պետական Պատկերասրահին է կտակել իր տասը լավագույն նկարները։

յագի արվեստի քննադատի արժանիքները, նրան ընտրեց ակադեմիայի թղթակից-անդամ։ Գրիգոր Զամբաքջյանը միևնույն ժամանակ չի մոռանում նաև իր նվերները ուղարկել Սովետական Հայաստանի պատկերասրահին և արդեն երրորդ անգամն է, որ նա նվիրում է արժեքավոր նկարներ։ Գ. Զամբաքջյանի նվիրատվություններին հատկացված է Հայաստանի պատկերասրահի մի անկյունը, որը հետզհետե կընդարձակվի և կճոխանա նրա նորանոր նվիրատվությունների միջոցով։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ՆՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, հայ ժողովուրդը յայնրեն նշում է Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման պատմական տարելիքը։ Այս օրերին Հայաստանի աշխատավորները, բազմահազար ինտելիգենցիան համակված են բարեկամական ջերմ սիրո զգացմունքներով դեպի հերոսական, տաղանդավոր ուկրաինական ժողովուրդը, որն առհավետ կապելով իր բախտը ռուս մեծ ժողովրդի հետ, հասել է չտեսնված նվաճումների իր ազգային վերածնության, տնտեսության և կուլտուրայի բնագավառներում։ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման տարելիքը սովետական բոլոր ժողովուրդները նշում են որպես մեծ տոն։

Համաժողովրդական այդ տոնի առթիվ Սովետական Հայաստանի քաղաքներում, գյուղերում, արդյունաբերական ձեռնարկություններում, հիմնարկներում, ուսումնական հաստատություններում տեղի են ունենում դասախոսություններ, զեկուցումներ և երեկոներ՝ նվիրված Ուկրաինային. կազմակերպվել են ուկրաինական ժողովրդի մեծ հաղթանակները պատկերող ցուցահանդեսներ։

Հայաստանի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտա-հետազոտական ինստիտուտներում տեղի ունեցան գիտական սեսիաներ՝ նվիրված Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակին։

Ուշագրավ էր Երևանի Պետական համալսարանի գիտական սեսիան, որը տևեց երկու օր։ Պատմական գիտությունների թեկնածու Ռ. Մանուկյանը սեսիայում հանդես եկավ զեկուցումով, որի մեջ նա կանգ առավ Սովետական Միության ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում ռուս ժողովրդի դերի վրա։ Դոցենտ Մ. Շիմշիրյանի զեկուցումը նվիրված էր ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարին՝ իր ազատության և անկախության համար։ Զեկուցումներով հանդես եկան նաև դոցենտներ Ա. Ներսիսյանը, Հ. Սայախյանը և պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը։

Մեծ հետաքրքրությամբ լսվեց Հ. Սայախյանի զեկուցումը՝ հայ ուկրաինական գրական կապերի մասին։ Զեկուցողը մասնավորապես կանգ առավ այն կապերի վրա, որոնք ստեղծվել են Սովետական իշխանության տարիներին սովետահայ և ուկրաինացի գրողների միջև։ Այդ կապերի շնորհիվ բեղմնավոր աշխատանք է կատարված գեղարվեստական գրականության թարգմանության գործում՝ ինչպես հայ, այնպես էլ ուկրաինացի գրողների կողմից։

Ապրիլի 28-ին Երևանում, Ա. Ապենդիարյանի անվան օպերային թատրոնում տեղի ունեցավ համաքաղաքային հանդիսավոր ժողով՝ նվիրված Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակին։ Ուկրաինական ժողովրդի նվաճումների մասին զեկուցումով հանդես եկավ Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանը։ Վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ, որի ծրագիրը կազմված էր ուկրաինացի և հայ երաժշտագետների ստեղծագործություններից։

Ուկրաինայում տեղի ունենալիք հոբելյանական հանդեսներին մասնակցելու համար կին ճն մեկնել Սովետական Հայաստանի կերպարվեստագետների, ճարտարապետների, գրողների, հասարակական և գիտական կազմակերպությունների պատվիրակությունները։

Ուկրաինական կառավարության հրավերով կիսել է մեկնել Հայաստանի աշխատավորների պատվիրակությունը՝ Հայկական ՍՍՌ Դերագույն Սովետի նախագահության նախագահ Ե. Ասուշյանի գլխավորությամբ, որը կմասնակցի Ուկրաինական ՍՍՌ Գերագույն Սովետի՝ Մայիսի 22-ին տեղի ունենալիք հոբելյանական սեսիային։

Ռեսպուբլիկայի աշխատավորության մեկ ուրիշ պատվիրակություն մեկնել է Մոսկվա՝ մասնակցելու Ռուսաստանի ֆեդերացիայի Գերագույն Սովետի հոբելյանական սեսիային, որը կայանալու է Մայիսի 27-ին։

ԳԻՏԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱ.— Մարտի վերջերին և ապրիլի սկզբներին Բաքվում տեղի ունեցավ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Գիտությունների ակադեմիաների Հասարակական գիտությունների բաժանմունքների միացյալ գիտական սեսիան, որին մասնակցում էին Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչները, ինչպես նաև միջին-ասիական ռեսպուբլիկաների և Դաղստանի ԱՍՍՌ գիտնականները։

Սեսիան բացեց Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Մ. Ալիևը, որը ջերմորեն ողջունեց ներկա հյուրերին և նշեց Անդրկովկասի գիտնականների համատեղ գործունեության կարևոր նշանակությունը գիտական հարցերի մշակման գործում։

Սեսիայում լսվեցին ավելի քան 30 զեկուցումներ՝ նվիրված Անդրկովկասյան ժողովուրդների պատմության, էկոնոմիկայի և կուլտուրայի, նրանց դարավոր կապերի, սոցիալական ու ազգային ազատագրության համար մղված համատեղ պայքարի հարցերին։ Զեկուցումներ կարդացին Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և Մոսկվայի գիտնականները։

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ.— Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայել պրոֆ. Գ. Տիգրանովի աշխատությունը՝ նվիրված հոչակավոր հայ երաժշտագետ Ա. Սպենդիարյանի կյանքին և գործունեությանը։ Այդ գիրքը մի խոշոր ավանդ է հայ մեծ երաժշտագետի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության գործում։

Գրքի հեղինակը ամենայն խնամքով հավաքել և մշակել է Ա. Սպենդիարյանի կյանքին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, նյութեր, նամակներ, հիշողություններ։ Այդ նյութերը ցույց են տալիս այն սերտ, բարեկամական կապերը, որը մեծանուն արվեստագետը ունեցել է իր ժամանակի ռուս և հայ ականավոր երաժշտագետների, գրողների, հասարակական գործիչների հետ։ Դրանց նոր լույս են սփռում երաժշտագետի գործունեության վրա, օգնում նոր ձևով գնահատելու Ա. Սպենդիարյանի կյանքի տարբեր ժամանակաշրջանները, ըմբռնելու նրա աշխարհայացքը, գաղափարական-գեղարվեստական սկզբունքները, ճշտելու նրա շատ աշխատությունների միտքը, դրանց ստեղծման ժամանակն ու պարագաները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆԻ 70-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանի ծննդյան 70-ամյակը։ Իր բազմամյա ստեղծագործական աշխատանքի ընթացքում Հ. Կոջոյանը կերտել է կերպարվեստի մի ամբողջ շարք հիանալի գործեր, որոնք հարստացրել են հայ կերպարվեստի գանձարանը։ Ասանձնապես այնքի են ընկնում նրա գրաֆիկ գործերը, ինչպես և լուսանկարները։ Նրան են պատկանում վերջին 25 տարում Հայաստանում հրատարակված գեղարվեստական մի շարք գրքերի նկարչական ձևավորումները։ Հ. Կոջոյանը մեծ աշխատանք է կատարում երիտասարդ արվեստագետների կրթության գնահատման։ Նա Երևանի Գեղարվեստական ինստիտուտի պրոֆեսոր-դասախոսներից մեկն է, որտեղ աշխատում է հիմնադրման օրից։

Երևանի հասարակայնությունը յայնորեն նշեց ռնվանի նկարչի հոբելյանը։ Այդ առթիվ կայացավ երեկո, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությունը և Նկարիչների միությունը։ Հոբելյարին ողջունեցին ռեսպուբլիկայի հասարակական, գրական կազմակերպությունների, կրթական հաստատությունների ներկայացուցիչները։ Ստացվեց էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր Սովետական Միության շատ վայրերից։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը, որին ներկա եղողները ընդունեցին ջերմորեն։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՀՅՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Ապրիլի վերջերին Երևան ժամանեց Ֆինլանդիայի պրոֆմիությունների պատվիրակությունը, որը Սովետական Միությունն էր հրավիրված Պրոֆմիությունների Համամիութենական Կենտրոնական խորհրդի կողմից։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էր 11 մարդ։ Հյուրերը Երևանում ծանոթացան քաղաքի շինարարության և արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքներին, եղան Արտաշատի շրջանի Դվին գյուղում, այցելեցին էջմիածին և Զվարթնոց, դիտեցին Հայաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրերը։ Ամենուրեք նրանք արժանացան ջերմ ընդունելության։

Մեկնելուց առաջ պատվիրակության անդամները շրջան ունեցան մամուլի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում հայտնեցին իրենց գոհունակությունը Երևանում կատարվող հսկայական շինարարության, հայ ժողովրդի ստեղծագործական եռանդի ու կարողությունների վերաբերյալ և խնդրեցին մամուլի միջոցով հայտնել իրենց սրտաջուլ շնորհակալությունը Հայաստանում իրենց նկատմամբ ցուցաբերված անկեղծ հյուրասիրության առթիվ։

Վերջերս Երևանում հյուր եղան նաև Անգլիայի ուսանողության ներկայացուցիչները։ Պատվիրակությանը գլխավորում էր Անգլիայի ուսանողության ազգային միության նախագահ Ֆրեդ Ջարվիսը։ Հյուրերը մասնակցեցին ուսման գործի դրվածքին ներկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում, այցելեցին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները և կուլտուրական հիմնարկները։

ԵՐԳԻՉԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ.— Սույն թվականի ապրիլից, «Սովետական Հայաստան» թերթի հրատարակությամբ լույս է ընծայվում «Ոգեր» պատկերազարդ երգիչական ամսագիրը՝ գրող Հրաչյա Քոչարի խմբագրությամբ։ Ամսագրի առաջին և երկրորդ համարները լայն ընդունելության արժանացան ընթերցող հասարակության կողմից։

«ՊԻՈՆԵՐ» ԱՄՍԱԳՐԻ 25 ՏԱՐԻՆ.— Լրացավ մանկա-պատանեկան «Պիոներ» (նախկին «Հոկտեմբերիկ») ամսագրի հրատարակման 25-ամյակը։ Հայաստանի դպրոցականների այդ սիրելի ամսագիրը խոշոր դեր է կատարում մեր մատաղ սերնդի դաստիարակման գործում։ Ամսագրին աշխատակցում են Սովետական Հայաստանի գրողները, բանաստեղծները, նկարիչները։ Ամսագիրը սերտ կապ է պահպանում իր փոքրիկ ընթերցողների հետ։ Նրանցից շատերը աշխատակցում են ամսագրին, պարբերաբար ուղարկելով իրենց նամակները, բանաստեղծությունները։ Ներկայումս ամսագիրը հրատարակվում է 4.000 օրինակ տպաքանակով։

ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.— Երևանում ստեղծված է մի հատուկ արհեստանոց, որտեղ օտար լեզուներով կինոնկարների բացատրական մակագրությունները փոխ են ածվում հայերենի։ Հայերեն մակագրություններով արդեն թողարկված է «Ոսկեկայլ լեռներում» ռուսական ֆիլմը։ Արհեստանոցը կահավորված է առաջնակարգ մեքենաներով։ Ընթացիկ տարում հայերեն մակագրություններով բաց է թողնվելու 8 ֆիլմ։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Անցյալ 1953 թվականին Երևանի Պետական համալսարանի նոր շենքի շինարարության համար նախատեսված բոլոր միջոցները լիովին իրացվեցին։ Կատարվեցին մեծ ծավալի հողային և բարելային աշխատանքներ, լրացվեց շենքի կառուցման համար հատկացված ընդարձակ տարածությունը, տեղադրվեցին շինարարական մեքենաներ և այլն։

Այս տարվա գարնանից շինարարական աշխատանքները ծավալվել են նոր թափով։ Արագորեն ա-

սալ է տարվում Կենսաբանական ֆակուլտետի կառուցումը։ Շենքը չորս կողմից երեսապատված է նոյեմբերյանի բաց գեղնավուն տուֆով։ Նախատեսված է մինչև ընթացիկ տարվա վերջը շինարարական աշխատանքները ավարտել։

Սկսված են համալսարանի շենքի գլխավոր հատվածի կառուցման աշխատանքները։ Այս հատվածումն են լինելու մեծ դահլիճը, գրադարանը, ընթերցարանը, վարչական հաստատությունները, ինչպես և մի շարք լաբորատորիաներ, փորձանոցներ, կաբինետներ։ Միաժամանակ սկսված է մի քանի այլ, ժամանակակից շենքերի կառուցումը։

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.— Հայաստանի կրթական հաստատությունները և պրոֆիլակտիկական կազմակերպությունները ձեռնամուխ են եղել մանուկների ամառային հանգստի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին։ Այն տարի այդ նպատակների համար հատկացվում են խոշոր միջոցներ։

Այս տարի Հայաստանի գեղատեսիլ ամառանոցային վայրերում՝ Ծաղկաձորում, Ստեփանավանում, Կիրովականում, Նոր Բայազետում, Ախտալում, Սևանում, Ապարանում, Դիլիջանում հանգստանալու են նախադպրոցական և դպրոցական հասակի մի քանի տասնյակ հազար երեխաներ։ Սկսվել է ամառանոցային շենքերի նորոգումը և բարեկարգումը։ Հոսանքի կետերից երեխաները կփոխադրվեն ամառանոցները։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ.— Այս տարի ռեսպուբլիկայում դպրոցական շենքերի շինարարությունը լայն թավալ է ընդունել։ Այդ նպատակի համար հատկացված միջոցները զգալիորեն գերազանցում են անցյալ տարվա հատկացումների գումարին։

Ներկայումս Հայաստանում կառուցվում է դպրոցական 21 նոր շենք։ Դրանցից 6-ը կառուցվում է Երևանում։ Դպրոցական նոր, գեղեցիկ շենքեր են կառուցվում Բասարգեչարում, Գորիսում, Ազիզբեկովում, Թալինում, Մեղրիում, Մարտունիում և մյուս շրջաններում։ Բոլոր շենքերը կունենան անհրաժեշտ հարմարություններ՝ մանուկների ուսման և կուլտուրական մասնագիտության համար։ Ցուրաքանչյուր դպրոց կունենա ընդարձակ դասարաններ, լավ կահավորված փորձանոցներ, ֆիզիկական կուլտուրայի դահլիճ, գրադարան-հանդերձարան, հանդիսասրահ, փորձերի համար անհրաժեշտ հողամաս։

ՍԻՄՖՈՆԻԿ ՀԱՄԵՐԳՆԵՐ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Երևանի արվեստի աշխատողները սերտ կապ են պահպանում Հայաստանի մյուս քաղաքների և շրջանային կենտրոնների աշխատավորների հետ։ Մայրաքաղաքի թատրոնների, Հայկական ֆիլհարմոնիայի ստեղծագործական խմբերը, ինչպես և մենակատարները հաճախակի և ցանկալի հյուրեր են լինում Կանգրում, Ալավերդիում, Դաշտանում, Ստեփանավանում և Ռեսպուբլիկայի ամենահեռավոր շրջանային կենտրոններում։

Վերջերս Կիրովականում համերգներով հանդես եկան Հայաստանի Պետական երգեցիկ խումբը, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Կվարտետը և Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը։ Սիմֆոնիկ նվագախմբի համերգները տեղի ունեցան քաղաքային թատրոնի շենքում և Ալեքսանդր Մյասնիկյանի անվան բիմիական գործարանի ակումբում։ Նվագախումբը, դիրիժոր Ի. Խաչատրյանի ղեկավարությամբ կատարեց հատվածներ Գ. Ցայկովսկու, Գլինկայի, Գունոյի, Արամ Խաչատրյանի և մյուս երաժշտագետների ստեղծագործություններից։

Համերգները, որոնց ներկա էին մեծ թվով հանդիսականներ, անցան մեծ հաջողությամբ։

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Անցյալ 1953 թվականին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների, հիմնարկությունների և տեղական Սովետների կողմից կառուցվել և շահագործման են հանձնվել 60.000 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի շենքեր։ Բացի այդ, քաղաքների բնակչությունը Պետությունից ստացված վարկերով կառուցել է 1.500 մասնավոր տուն՝ 57.000 քառակուսի մետր բնակելի տարածությամբ։

Ընթացիկ 1954 թվականին բնակարանային շինարարության համար կատարվող հատկացումները կրկնակի չափով գերազանցում են անցյալ տարվա հատկացումները։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ.— Հայաստանի ճարտարապետների միությանն վարչությունը կազմել է հատուկ բաժին, որը նպատակ ունի օգնել ռեսպուբլիկայի գյուղական վայրերում կատարվող շինարարությանը։ Բաժինը, որի մեջ մտնում են հմուտ ճարտարապետներ, քննություն է անելու գյուղական վայրերում կատարվելիք տանն տեսակի կառուցումների նախագծերը, տալու է իր ցուցումները և եզրակացություններ, ինչպես նաև օգնելու է պատրաստելու օրինակելի նախագծեր։ Բաժնի աշխատանքներին մասնակցում են գյուղատնտեսության մասնագետներ։

ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐԸ.— Հայաստանի հանքային ջրերը՝ «Ջերմուկը, «Արզնին», «Դիլիջանը մեծ հմայք ունեն ոչ միայն ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից դուրս։ Ընթացիկ տարվա վերջին 3 ամսում Մոսկվա, Լենինգրադ, Տաշքենդ, Կիև, Սվերդլովսկ և Սովետական Միության այլ վայրերն է ուղարկված ավելի քան 130 վագոն հանքային ջուր (շշերով)։

Այս տարի հանքային ջրերի թողարկումը զգալիորեն ավելացվում է։ Արտադրվելու է 17.000.000 շիշ «Արզնի» կամ 4.000.000 շշով ավելի քան անցյալ տարի։ Ավելացվում է նաև «Ջերմուկի» ու «Դիլիջանի թողարկումը։ Մինչև տարվա վերջը շահագործման կհանձնվի «Ջերմուկ» հանքային ջրի թողարկման գործարանը, որը տարեկան կարող է տալ մինչև 10.000.000 շիշ շուշ։ Գործարանում բոլոր արտադրական գործողությունները մեքենայացված են։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՈՌՈԳՈՒՄԸ.— Համբարձումի բարձրավանդակը (Ալավերդու շրջան) կլիմայական տեսակետից շափազանց նպաստավոր է մերձարևադարձային կուլտուրաների զարգացման համար։ Սակայն ոռոգման ջրի սակավության պատճառով մշակվող կուլտուրաները բարձր բերք չեն տալիս։

Այս տարվա գարնանից սկսվել են այդ բարձր բարձրավանդակի ոռոգման աշխատանքները։ Այդ նպատակով Լոռու ձորում, Դեբեդ գետի ափին կառուցվում է ջրհան կայան, որն աշխատելու է էլեկտրականությամբ։ Ոռոգման ենթակա տարածություններում անց են կացվելու ջրանցքներ։ Այս ամառ կայանի միջոցով ոռոգվելու են ծիքապտղի, թուզի, նուշի և մերձարևադարձային այլ կուլտուրաների այգիներ։

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Հայաստանի շրջանային կենտրոնները տարեցտարի բարեկարգվում և ընդլայնվում են։ Պետությունն այդ նպատակների համար հսկայական միջոցներ է հատկացնում։ Այս տարի ռեսպուբլիկայի 28 շրջանային կենտրոններից 17-ում կառուցվում են բնակելի խոշոր շենքեր, հագեցած անհատական բնակարանային շինարարություններ։ 12 շրջանային կենտրոններում կառուցվում են արտադրական նոր խոշոր ձեռնարկություններ։ Նոր Բայազետում և Թալինում կառուցվում են նոր հյուրանոցներ, իսկ Իջևանում, Հոկտեմբերյանում, Եռաշադինում, Բասարգեչարում և Միկոյանում՝ ջրմուղներ։ Ընթացիկ գարնան շրջանային կենտրոններում տնկվել է մի քանի հարյուր հաղար ծառ, 36 հեկտար տարածության վրա ստեղծված են պուրակներ ու ծաղկանոցներ։ Այս տարի հիշյալ վայրերում սալահատակվելու և ասֆալտապատվելու է ավելի քան կես միլիոն քառակուսի մետր տարածություն։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճույքով կհաստատենք, որ սովետական մյուս ժողովուրդներու կարգին հայ ժողովուրդն ալ վերջին ժամանակներս մասնավոր հետաքրքրության առարկա դարձավ Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի աշխատավորական լայն շրջանակներու կողմեն։ Այս հետաքրքրությունը ավելի շեշտվեցավ և հետզհետե ավելի ծավալուն հանգամանք ստացավ մանավանդ, երբ Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի քաղաքացիները պատեհություն ունեցան իրենց հողին վրա ողջունելու հայ ծագումով գիտության և արվեստի մարդիկ— կոմպոզիտոր, երգիչ, դերասան, մաթեմատիկոս, տեխնիկ, սպորտսմեն և այլն, որոնք Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի բեմերուն վրա և ռումեն հասարակության առջև հանդես բերին սեփական ժողովրդի մտքի և հոգու ստեղծագործությունները։

Հայ կոմպոզիտորներու ստեղծագործությունները սիրով կունկնդրվին ռումեն երաժշտասեր հասարակության կողմե, հայ ժողովրդի տաղանդավոր զավակներ Արամ Խաչատրյանի, Ավետանդր Հարությունյանի և Առնո Բաբաջանյանի անունները ծանոթ և սիրելի են ռումեն ժողովրդին համար։ Օր չանցնիր, որ ռումեն ռադիո-կայանները իրենց ռեպերտուարին մեջ տեղ չտան անոնց ստեղծագործություններուն, ինչպես և հայ ժողովրդական երգերուն։

Երգիչներ՝ Զ. Դոլուխանյանի, Ք. Գրիգորյանի և Պ. Լիսիցյանի երևումը ռումեն բեմերուն վրա, իրենց զմայլելի երգերով, համակրության տաք մթնոլորտ մը ստեղծեց ռումեն արվեստասեր ժողովրդի մեջ այդ երիտասարդ ու փայլուն տաղանդներուն ծնունդ տվող հայ ժողովրդի նկատմամբ։ Ռումեն թատերասեր հասարակությունը պիտի չմոռնա Մոսկվեան թատերախումբեն Պետրոսյանի անունը, որ փայլեցավ ռումեն բեմին վրա սքանչելիորեն կատարած Ցակոշի իր դերով, ինչպես որ պիտի չմոռնա Երևանի քալետի և օպերայի արտիստներեն Անդա Սարգիսյանը, որ Բովարեսոի մեջ, առաջին անգամ ըլլալով, կազմակերպեց «Բախչիսարայի շատրվանը» բալետը։

Սպորտով հետաքրքրվող ռումենները իմացան, անշուշտ, որ հայ մըն է ճատրակի (շախմատ) խաղին մեջ առաջավոր Տիգրան Պետրոսյանը, ինչպես որ հայ մըն է ըմբշամարտի մեջ Եվրոպայի ախոյանության արժանացած՝ Վ. Ենգիբարյանը։

Այս բոլորը, անտարակույս, իրենց բարերար դերը ունեցան հայ ժողովրդի և անոր արժեքներու մասին հետաքրքրություն արթնցնելու ռումեն ժողովրդական լայն շրջանակներուն մեջ, որոնց առիթ կտրվեր, այսպիսով, մոտեն և անձամբ տեսնելու և գնահատելու բարեկամ հայ ժողովրդի արժեքները։

Հայ ժողովրդի մտավոր և հոգեկան արժեքները ռումեն ժողովրդին ծանոթացնելու գործին մեջ կարևոր ֆակտոր մը հանդիսացավ ու կշարունակե հանդիսանալ Ռումեն-Սովետ բարեկամության ընկերությունը (ԱՌԼՈՒՍ), որ իր սարքած ցուցահանդեսներով, կազմակերպած դասախոսություններով և ներկայացուցած ֆիլմերով և այլն, լայնորեն և ճշգրիտ կերպով ծանոթացուց ռումեն ժողովրդին Սովետական Հայաստանի լուսաշող իրականությունը և անոր ստեղծագործ ժողովրդի ձեռք բերած հոյակապ նվաճումները։

Նշելու արժանի է նույնպես այն աշխատանքը, զոր կատարեց ու կշարունակե կատարել Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տունը, որ իր զանազան եղանակներով —երգահանդես, դասախոսություն, ցուցահանդես, ֆիլմ և այլն, ջանաց ու կջանա ժողովրդականացնել այս երկրին մեջ հայ մտքի ստեղծագործությունները, որոնց սիրով ներկա կլլլան հայերու հետ միասին նաև մեծ թվով ռումանացիներ, ասիոթ ընծայելով, այսպես, երկու ժողովրդի աշխատավոր մարդոց քով-քովի գալու հաճախ, ճանչնալու դիմար և կապվելու միմյանց հետ բարեկամական ավելի սերտ կապերով։

Այս մարդին մեջ ոչ մեկ թանկագին է նաև ռումանահայ գույգ թերթերու՝ «նոր կյանքի» և մանավանդ ռումաներեն բաժինով ալ օժտված «Սևանա» պատկերազարդ ամսաթերթի կատարած դերը։ Անոնք իրենց էջերուն մեջ պարբերաբար ներկայացնին ռումեն բարեկամ ժողովրդին մեր հարազատ Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի կենդանի իրականությունը հոդվածներով, ռադիո հաղորդումներով և լուսանկարներով, լմոնալով, մինչև ուն տեն, ծանոթացնել, փոխադարձաբար, Մայր Երկրի և արտասահմանի հայ ընթերցողներուն՝ Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի ձեռք բերած նվաճումները տնտեսության, մշակույթի, արվեստի բնագավառներուն մեջ։

Ուշագրավ է նույնպես այն առանձին շահագրգռությունը, զոր ցույց կուտան, ժամանակ մը ի վեր, ռումեն մտավորականությունն ու մամուլը հայ գրականության ու գիտության նկատմամբ։

Ռումեն թերթերու մեջ հոդվածներ երևցան՝ նվիրված ժամանակակից աստղագիտության սովետահայ ականավոր ներկայացուցիչ Վիկտոր Համբարձումյանի, երիտասարդ մաթեմատիկոս Սերգեյ Մերգելյանի և գիտնական ակադեմիկոսներ եղբարք Ալիխանյաններու։ Ռումեն պարբերականներ, ինչպես, օրինակ, «Վեակ նոուս, «Կոնտեմպորանուլ». «Վիացա Ռոմընեասկա» և «Պիոներուլ» մանկական հանդեսը տեղ տվին իրենց էջերուն մեջ սովետահայ բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանի, Նաիրի Զարյանի և ուրիշներու գրական ստեղծագործություններուն։

Դեռ ավելին։ Ռումաներենի թարգմանվեցան ու հրատարակվեցան ամբողջական գործեր, ինչպես, Վ. Անանյանի պատմվածքները, Գարեգին Սևունցի «Թեհրան» վեպը (20.000 օրինակով), իսկ Մարիետտա Շահինյանի «Հիդրոկայանը» արդեն երրորդ տպագրությամբ է որ լույս կտեսնե։ Թարգմանվելու ձեռնարկված է նաև հայ ժամանակակից բանաստեղծության վարպետ Ավետիք Իսահակյանի գործերը, ինչպես և Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպը։

Ռումեն հոդին վրա հայ ժողովրդի կյանքը ծանոթացնելու կոչված հիշյալ բոլոր միջոցներն ալ, անշուշտ, որ ունեցան իրենց օգտակարությունը, բայց իհարկե, չեն կրնար ամբողջովին ու լրիվ պատկերը տալ ռումեն ժողովրդին մեր բուն Հայրենիքի ու մեր ժողովրդի ներկա և անցյալ իրականության մասին։ Հարկ էր անձամբ երթալ և սեփական աչքերով տեսնել բոլորը՝ հայ երկիրը, հոն ապրող բնիկ ժողովուրդը իր առօրյայով, մտնել անոր աշխատած ֆաբրիկաներեն ներս, այցելել անոր կոլտնտեսությունները, անոր մշակութային ու հասարակական հաստատությունները և տեսնել կենդանի աչքով անոնց ներքին կազմակերպությունն և անոնց մեջ կատարվող աշխատանքի մեթոդներն ու արդյունքները, հետաքրքրվիլ ու ծանոթանալ նաև հայ ժողովրդի դարավոր անցյալին, քարերու վրա փորված և կամ մագաղաթին հանձնված անոր հինավուրց մշակույթի հետքերուն։

Այս գեղեցիկ նպատակով էր, ահա, որ անցյալ տարի Սովետական Միությունը այցելող ռումեն պատվիրակությունները, բաղ-

կացած աշխատանքի զանազան մարզերու պատկանող մարդոցմէ, հաշորդաբար այցելեցին նաև Սովետական Հայաստան, որ անոնք ամէն հնարավորություն ունեցան մոտեն և անմիջականորեն տեսնելու և ուսումնասիրելու մեր Հայրենիքի իրականությունը իր բոլոր կողմերով։ Հայրենիք վերադառնալով՝ պատվիրակությանց անդամները, ինչպես պետական մրցանակի լաուրեատ դոկտոր Պ. Դիմիտրիու, պրոֆ. բժիշկ Միկու, ակադեմական, ճարտարապետներ՝ պրոֆ. Մայկու և Ս. Կուտի, ԱՌՈՒՍ-ի քարտուղար Սանտա Ռանկեց, ռեժիսոր և Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր վարպետ Ի. Շահիկյան, Ռումեն-Սովետ հաստատության տնօրեն Կ. Պիկ և ուրիշներ, խոսքով ու գրչով պատմեցին ռումեն ժողովրդին ինչ որ տեսած ու հաստատած էին տեղվույն վրա ականատեսի աչքերով մեր հարազատ Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի մեջ։

Իր հերթին Սովետական Հայաստանի ժողովուրդը ջերմ փափագ ու հետաքրքրություն ցույց կուտա Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի կյանքի ու ձեռք բերած հաջողություններու նկատմամբ։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքին մեջ կազմակերպվեցավ Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի Տնտեսական ցուցահանդեսը, զոր այցելեց Երևանի ազգաբնակչությունը ամենամեծ շահագրգռությամբ, անոր մեջ տեսնելով ռումեն ժողովրդի արտադրական վերելքը։ Սովետահայ ժողովուրդը առանձին ուշադրությամբ կուսումնասիրեն ռումեն երաժշտությունը։ Սովետական Հայաստանի մամուլը հաճույքով կարձանագրեն, օրը-օրին, ռումեն ժողովրդի ձիգերն ու նվաճումները սոցիալիզմի կառուցման համար։ Դեռ վերջերս Երևանի Սպենդիարյանի անվան թատրոնի կոլեկտիվը բեմադրեց ռումեն կլասիկներեն Ի. Լ. Կարաջիալեի «Փոթորկալից գիշեր մը» կատակերգությունը՝ հայերեն լեզվով և այլն։

Ռումեն և հայ ժողովուրդներու փոխադարձ ծանոթության ծառայող այս աշխատանքները, տարակույս չունինք, որ պիտի շարունակվին առաջիկայի ևս ու ա՛լ ավելի մեծ թափով, խորացնելու և ամրապնդելու համար երկու ժողովուրդներու բարեկամական կապերը։

(«ՆՈՐ ԿՅԱՆՔ», Բուխարեստ, 14 մարտի 1954 թ.)